6729

059
2-70
1905

12001

Օ.59
Գ-70
186

# ԾՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ

## 1905

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Աշխատութիւն

ՄԱԿԱՐ ՁՄՇԿԵԱՆԻ

Տասնեւմեկերորդ տարի

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
Тогр. Т.М. Ротиніанца. Гол. пр. № 43
1904

Дозволено цензурою. Тифлисъ
Iюля 1904 года.



ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԻՇԽԱՆ Պ.
ՍՎԵԱՏԱՊՕԼԿ-ՄԻՐՍԿԻ

Ըստ բարցու հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս, Դիւանս թոյլատրէ տպագրութեան Օրացոյցիս։

Դիւանապետ
Կորիւն Վարդապետ.

'ի 28 Փետր. 1904 ամ.
'ի Ք. Տփխիս։
Թ. 167.

48119-ա
33430-65
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна



## Ա) 1905 Թ. ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Գիր տարւոյն է . . . . . . . Ջ
Վերադիրը . . . . . . . . Ե
Եօթնեբեակը . . . . . . . Ե
Իննեւտասնեբեակը . . . . . Դ
Տանուտէրն . . . . . . Սախւծն.

## Բ) ՏԱՐԵՄՈՒՏՆԵՐ

Հայոց՝ ըստ բուն Տոմարի Օգոստ. 11-էն
» ըստ Աշարիայի Մարտի 21 »
Հաբեշաց՝ Օգոստոսի 26 »
Ռուսաց՝ Յունուարի 1 »
Լատինաց՝ (ըստ Նոր Տոմ.) Դեկ. 19 »
Մահմեդականաց՝ Յունիսի 10 »
Հրէից՝ Սեպտեմբերի 7 »
Չինաց՝ Փետրուարի 1 »

## Գ) ՀԱՅՈՑ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱՆՇԱՐԺ ՑԱՅՏՆԻ ՏՕՆԵՐԸ, ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Օր Կաղ. Շաբաթ Յունուարի 1-ին
» ԾՆՆԴԵԱՆ Հինգշաբթի . . 6 »
Միջոց ունիք 32 օր:
Առաջաւորաց Բարեկ. Փետր. 6 »
ՕՐ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ Երկշաբ. 14 »
Բուն-Բարեկենդան » 27 »
ՕՐ ԱՒԵՏՄԱՆ Եշ. Ապրիլի 7 »
Օր Երևման Ս. Խաչի » 15 »
ԶԱՏԻԿ . . . . . » 17 »
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ Մայիսի 26 »
ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ Յունիսի 5 »
Բարեկ. Ս.Լուս. պհց. Յունիսի 26 »
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Յուլիսի 2 »
Բարեկ. Վարդ. պհց.. » 17 »



ՎԱՐԴԱՎԱՌ . . » 24 »
Միջոց ունիք 2 շաբաթ,
Բարեկ. Ս. Աստուած. պհց. Օգ. 7 »
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Ածած. » 14 »
Միջոց ունիք երեք շաբաթ,
Բարեկ. Ս. Խաչի Սեպտեմբերի 4 »
ԽԱՉՎԵՐԱՑ. « 11 »
Բարեկ. Վարագայ Ս. Խաչի « 18 »
Վարագայ Ս. Խաչ. « 25 »
Միջոց ունիք 7 շաբաթ,
Գիւտ Խաչ. . . Հոկտեմբ. 23 »
Յիսնակաց Բարեկ. Նոյեմբ. 20 »
Ս. Յակոբայ Բարեկ. Դեկտ. 11 »
Միջոց ունիք 17 օր,
Բարեկ. Ծննդ. պահոց. Հինգշաբթի
Դեկտեմբերի . . . . . . . . 29 »

---

Դ) Այն օրերը, երբ Հայաստանեայց Եկեղեցւոյ օրէնքով պսակի խորհուրդ կատարելն արգելվում է։

Ամբողջ Մեծ պահոց և Յինանց օրերի ընթացքում. մինչև Նշխական— առաջին Կիւրակէն Յարութեան։

Այն Կիւրակէ երեկոներին, երբ միւս օրը սրբոց տօն չէ:

Ամեն Շաբաթ երեկոներին։

Ամեն լոյս—Չորեքշաբթի և լոյս Ուրբաթ երեկոներին։

Շաբաթական պահոց ընթացքում։

Տէրունական մեծ տօների նախընթաց երեկոներին։

Նաւակատեաց Ուրբաթ երեկոներին։

Ծննդեան ութօրէից, Վարդավառի 3 օրերը. Վերափոխման 10-րդ օրը և Ս. Խաչի ամբողջ շաբաթը։

—

# ՅՈՒՆՈՒԱՐ

## 31 ՕՐ

Երկիրը բացի իւր առանցքի վերայ պտտուելուց, պտտում է նաև արևի շուրջը—365 օրում 5 ժ. 48 ր. 51 վայրկեանում։ Եւ այդ ժամանակամիջոցը անուանել են տարի։ Հին ժամանակները այդ շրջանը անուանում էին Կենդանակերպեան կամ Զոդիակոսեան շրջան։ Երկիրը պտտուելով արևի շուրջը՝ անցնում է 12 համաստեղութիւններ, որոնց անուանել են Կենդանակերպներ. իսկ իւրաքանչիւր համաստեղութիւնը ամիս։ Ջրհոս կենդանակերպ համաստեղութեանը — համապատասխանող Յունուար ամսին, անուանել են Հռովմայեցւոց չաստուած Յանոսի անունով։ Այսպէս կարգաւորեց Հռոմուլոսի ժառանգ Նումեա Պոմպէացին,

Հռոմուլոսի տարուայ ամիսների թիւը լրացնելու համար։ Մեր նախնիքն էլ, ինչպէս ուրիշ ազգեր, նայելով բնութեան երևոյթներին, երկրի սովորութեան, աւանդութեան, նաև մարդկանց զբաղմունքների և պատահած ժամանակին, ամիսներին յարմար անուններ էին տալիս. օրօրինակ՝ տարեգլուխը, է յիշատակ Ջրըհեղեղի սկսել են Օգոստոս ամսից, Ջրհեղեղի վերջանալու և Նոյեան Նաւի—տապանի կանգնած տեղին հասնելու պատճառով անուանել են Նաւասարդ, որ է Նաւ-աստ-արդ, (Նաւը-արդէն-այստեղ է կամ Նաւը հասել է արդէն)։ Յունուարին անուանել են Արաց։

1 Շբ. դկ. 3. օր Ծննդեան պահոց։ 8
Տարեմուտ և Կաղանդ։ Ս. Բարսեղի հայրապետին և եղբօր Նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստոսի Հռովմայ հայրապետին և Աբբայ Եփրեմի Խորին Ասորւոյ։ Ռուսաց՝ Տօն Անուանակոչութեան Տեառն։



2 ✠ Կիր. տյ. 4. օր Ծննդ. պահոց։ 9
Զ. Կիր. զկնի Յիսնակի։
3 Բշ. տկ. 5. օր Ծննդեան պահոց. 10
4 Գշ. բյ. 6. օր Ծննդեան պահոց։ 11
5 Դշ. բկ. Ճրագալոյց Ծննդեան։ 12
Նաւակատիք։ Երեկոյ. զկնի պատարագի նախատօնակ (մինչև ամսոյս 14-ն ամեն երեկ. նախատօնակ կատարի)։ Ռ. Ճրագալոյց Աստուածայայտնութեան։
6 ✠ Եշ. ֆյ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ 13
ՄԿՐՏՈՒԹԵԱՆ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ջրօրհնէք։ Ուտիք է մեզ անմիջոց ութ օր։ Ռուսաց և Յունաց՝ Մկրտութիւն Տեառն։
7 ✠ Ուր. ֆկ. 2. օր Ծննդեան։ Յիշատակ մեռելոց։ Ռուսաց՝ Ս. Յովհաննու Կարապետին։ 14

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| 8 | Շբ. դյ. 3. օր Ծննդեան։ Արեգակն 'ի Ջրհոսն մտանէ. Լրումն լուսնի. [illegible] իջ. | 15 |
| 9 | ✠ Կիր. դլ. 4. օր Ծննդեան։ | 16 |
| 10 | Բշ. այ. 5. օր Ծննդեան։ | 17 |
| 11 | Գշ. ալ. 6. օր Ծննդեան։ | 18 |
| 12 | Դշ բյ. 7. օր Ծննդեան։ | 19 |
| 13 | ✱ Եշ. բլ. 8. օր Ծննդեան և ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ։ | 20 |
| 14 | Ուր. գյ. Պահք։ Ցերեկ. Նախատօնակ։ Ռուսաց՝ Ս. կուսին Նունեայ։ | 21 |
| 15 | Շբ. գլ. Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին։ Օր Անուանակոչութեան Վեհափառ Մկրտչի Ա. Կաթուղ. ամ. հայոց։ Վերջ. քռ. լս. [illegible] իջ. | 22 |
| 16 | ✠ Կիր. դյ. Բ. կիր. զկնի Ծննդ. Հարսանիք | 23 |
| 17 | Բշ. դլ. Ս. Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիս. և Աբիսողոմայ սարկաւագին։ | 24 |
| 18 | Գշ. այ. Ս. Անտոնի Ճգնաւորին. Ս. Տրիփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի Ճգնաւորին. | 25 |
| 19 | Դշ. ալ. Պահք։ | 26 |

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| 20 | Եշ. բյ. Ս. Թէոդոսի Թագաւորին և մկցն Եփեսոսի։ | 27 |
| 21 | Ուր. բլ. Պահք։ | 28 |
| 22 | Շբ. գյ. Ս. Հայրապետացն Աթանասի և Կիւրղի։ | 29 |
| 23 | ✠ Կիր. գլ. Գ. Կիր. զկնի Ծննդեան։ Հարսանիք։ Ծն. լս. Ս[illegible]։ | 1 |
| 24 | Բշ. դյ. Ս. Կիրակոսի և մօրն նորա Յուղիտայի և Ս. վկայիցն Գորդիոսի, Պօղիքտոսի և Գրիգորիսի։ | 2 |
| 25 | Գշ. դլ. Ս. Վահանայ Գողթնացւոյն։ | 3 |
| 26 | Դշ. այ. Պահք։ | 4 |
| 27 | Եշ. ալ. Ս. վկայիցն Եւգենիոսի, Մակարիոսի, Վալերիոսի, Կանդիտոսի և Ակիւղասայ։ | 5 |
| 28 | Ուր. բյ. Պահք։ | 6 |
| 29 | Շբ. բլ. Ս. Գրիգորի Աստուածաբանին | 7 |
| 30 | ✠ Կիր. գյ. Դ. Կիր. զկնի Ծննդեան։ Հարսանիք։ | 8 |

Ո ՅՈՒՆՈՒԱՐ Լ

Ծ Առ. քռ. լռ. Խաչա ևղանոյ։
31 Բշ. Գլ. Ս. Մակաբայեցւոցն, 9
Եղիազարու քահանային, Շամունեայ և եօթն որդւոց նորին։

—

Այս ամսուայ մէկից մինչև 31-ը օրն աւելացել է 1 ժ. 52 րոպէ։

ՅՈՒՆՈՒԱՐ.— Ջրհոսն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համեստ է, բարի, սիրելի, խելացի, ուրախ, հետաքրքիր, կասկածոտ և հանճարեղ՝ որից և օգտուող։ Միակ պակասութիւնը՝ անչափ փառամոլութիւնն է։ Սկզբումը չունեոր, վերջը կարողութեան տէր, միայն այդ ամենն եա վատնող։ Երեխաներ նաև քիչ ունեցող։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաստատակամ է, վեհանձն, անկեղծ, շռայլ, ուրախ և աւելի իւր բաւականութիւնների ետևից ընկնող։ Իւր զուարթ բնաւորութեան շնորհիւ հեշտութեամբ կըտանէ զանազան վշտեր և անյաջողութիւններ, որոնց սպասելու է հէնց ամուսնութեան սկզբից։ Շատ տեղ կըճանապարհորդի և ջահիլ ժամանակ իւր քաշած նեղութիւններից մեծ հարստութիւն ձեռք կըբերէ, բայց ծերութեան ժամանակ զգուշանալու է, որ անդամալոյծ չդառնայ։

Առհասարակ յունուարին ծընուածները հոկտեմբեր ամսուայ կէսից մինչև նոյեմբերի կէսը հիւանդանալուց զգուշանալու են։ Իսկ իրենց գործերի ամենայաջող ժամանակը դեկտեմբերի 15-ից մինչև յունուարի 15-ն է։

———

Օ | Ն

# ՓԵՏՐՈՒԱՐ

## 28 Օր

Օրացոյցը կամ ժամանակի հաշիվը սկսուեցաւ հին ժամանակները յոյներից և հռովմայեցիներից, այդ պատճառով նոր ազգերն էլ մինչև այսօր հին ազգերի գործածած անուններն են գործ դնում։ Այս ամիսն էլ, Հռոմուլոսի ժառանգ Նումա Պոմպէացին կարգադրեց տարեշրջանի երկրորդ ամիս համարել։ Փետրվար ամիսը համապատասխանում է—Ձուկ համաստեղութեանը և վերցրած է Ֆեբրուալ բառից։ Այսպէս անուանում էին հռովմայեցիք զոհաբերութեանը՝ որ սովորաբար այս ամսին էին կատարում։ Մեր նախնիքն էլ երևի հէնց այս պատճառաւ անուանել են այս ամսին Մեհեկի (երևի Մեհենաց ամիս)։

1 Գշ. դյ. Ս. Երկոտասանից մարգարէիցն, Ովսեայ, Ամովսայ, Մի- 10

Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն

քեայ, Յովելեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յօնանու, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարեայ և Մաղաքեայ։

2 Դշ. դէ. Պահք։ 11

Յ. և Ռ. Տեառնընդառաջ։

3 Եշ. ոյ. Ս. Սուքիայ և երեց դստերացն, Պիստոսի, Ելպիսի և Ագապի։ 12

4 Ուր. ոէ. Պահք։ 13

5 Շբ. թյ. Ս. որդւոց և Թոռանց Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի։ 14

6 ✱ Կիր. թէ. Ճ. կիր. զկնի Ծննդեան։ Բարեկենդան Առաջաւորաց պահոց։ 15

☉ Լր. լուսնի. Ցուրտ և չոր եղ.

7 Բշ. փյ. 1. օր Առաջաւ. պահոց։ 16

☉ Արեգ. 'ի Ձուկն մտանէ։

Օր իջանելոյ ջերմութեան արև-ու 'ի ջուրս։

8 Գշ. փէ. 2. օր Առաջաւ. պահոց։ 17

33430·65

...ՍԱՍՆԻԿ ... Гос. Библиот...

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Լ |
|---|---|---|
| 9 | Դշ. գյ. 3. օր Առաջաւ. պահոց։ | 18 |
| 10 | Եշ. գլ. 4. օր Առաջաւ. պահոց։ | 19 |
| 11 | Ուր. դյ. 5. օր Առաջաւ. պահոց։ Ցիշատակ Յօնաննու մարգարէին։ | 20 |
| 12 | Շբ. դլ. Ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսի և չորեքտասան զինուորացն և Ս. Ատովմեանց զօրավարացն։ Հանդիսաւոր որ ուխտի Տփխիսայ Ս. Սարգիս եկեղեցւոյ։ | 21 |
| 13 | ✠ Կիր. բյ. Զ. Կիր. զկնի Ծննդեան։ Ցերեկոյին Նախատօնակ. | 22 |
| 14 | ✱ Բշ. բլ. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ։ Օր իջանելոյ ջերմութեան արեւու յ'օդս։ | 23 |
| | ☾ Վերջ. քա. լս. Փոթորկալից եղ։ | |
| 15 | Գշ. գյ. Ս. Սուքիասեանց վկայիցն. | 24 |
| 16 | Դշ. գլ. Պահք։ | 25 |
| 17 | Եշ. դյ. Ս. Ոսկեանց քահանայիցն։ | 26 |
| 18 | Ուր. դլ. Պահք։ | 27 |
| 19 | Շբ. եյ. Ս. ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵՒԻ հայրապետին մերոյ։ | 38 |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Լ |
|---|---|---|
| 20 | ✠ Կիր. ել. Է. Կիր. զկնի Ծննդեան։ Հարսանիք։ | 29 |
| 21 | Բշ. զյ. Ս. Մարկոսի, եպիսկոպոսին, Պիոնի քհն., Կիւրղի և Բենիամինի սարկաւագացն և Ս. վկայիցն Աբդլմսէի, Որմզդանայ և Սայենի։ Ցերեկ. Նախատօնակ։ Որ իջանելոյ ջերմութեան արեւու 'ի հողս։ | 30 |
| | ◉ Ծնունդն լուսնի. Հողմախառն։ | |
| 22 | Գշ. զլ. Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ քահ. | 1 |
| 23 | Դշ. էյ Պահք։ Ցերեկ. Նախատօն. | 2 |
| 24 | ✱ Եշ. էլ. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ զօրավարացն մերոց և 1036 վկայիցն, որք անկան 'ի մեծ պատերազմին Աւարայրի։ Տօն ազգային և Ցիշատակ մեռելոց։ | 3 |
| 25 | Ուր. ըյ. Պահք։ | 4 |
| 26 | Շբ. ըլ. Կ. Պօլսոյ Ս. Ժողովոյ՝ 150 հայրապետացն։ Զկնի երեկոյեան ժամասացութեան ծածկեսցի սեղանն վարագուրաւ։ | 5 |
| 27 | ✠ Կիր. թլ. Բուն-Բարեկենդան։ Եւս Ց. և Ռուսաց։ | 6 |

| 0 | ՓԵՏՐՈՒԱՐ | Լ |
|---|---|---|
| 28 | Բշ. աջ. 1. օր մեծի պահոց։ | 7 |

Այս ամսուայ 1 ից մինչև 31-ը օրը աւելացել է 2 ժ. 4 րոպէ։

---

ՓԵՏՐՈՒԱՐ.—Ձուկն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան խաղամոլ է, համարձակ, գիտուն սնապարծ ու զուարթ։ Ջահիլ ժամանակ չունենոր, սակայն հարստանալուց յետոյ շռայլող, վատնող։ Թէև լաւ շրջանների սիրահար, բայց մինչև 40 տարեկան հասակը կանանցից քամբաղդ։ Եւ իր անընդունակութեան շնորհիւ վնասներ կրելով ինքն է միայն տուժում։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաղուագիւտ գեղեցկուհի է լինում, յաճախ սրտով բարի, խելօք, ընդունակութեանց տէր ու դրական կարծիքներ ունեցող։ Երեխաներ էլ քիչ է ունենում։

| 0 | ՄԱՐՏ | Լ |
|---|---|---|

31 ՕՐ

Հռովմայեցոց մէջ Մարտն էր Հռոմուլոսի տարուայ առաջին ամիսը, որ իր անունը ստացել է պատերազմի չաստուած Մարսից, որը Հռոմուլոսի հայրն էր համարւում. (աւանդութեամբ Հռովմի հիմնադրի)։ Այսպէս անուանեց Հռոմուլոսը, տարին բաժանելով ամիսների։ Որովհետև Իտալիայում այս ամսումն է սկսւում գարունը, սորա համար հին ժամանակները գարունը ընդունելու համար տօն էին կատարում։ Այդ հանդէսը պսակի և ամուսնութեան տօն էր։ Ամուսնացած կանայք ծաղիկներ էին զոհաբերում հպարտութեան չաստուած Իունունայի ուղտատեղոյն, իսկ տղամարդիկ իրենց կողմից զոհաբերում էին երկդիմեան չաստուած Յանոսին։

Օ **ՄԱՐՏ** Ն

Այս տօնը կանանց յաղթութեան հանդէս էր, լի ուրախութեամբ և ցնծութեամբ։ Որովհետև հին ժամանակները շատ ազգերի տարին սկսւում էր այս ամսից, որ համարւում էր արևային տարեշրջանի սկիզբն, երևի հենց այս պատճառաւ մեր նախնիքն էլ այս ամսին անուանել են Արեգ։

1 Գշ. ակ. 2. օր մեծի պահոց։ 8

☽ Առ. քռ. լս. Ցրտախառն եղ.

2 Դշ. բձ. 3. օր մեծի պահոց. 9

3 Եշ. բկ. 4. օր մեծի պահոց։ 10

4 Ուր. գձ. 5. օր մեծի պահոց։ 11

5 ✠ Շբ. գկ. 6. օր մեծի պահոց։ 12

Ս. Թէոդորոսի զօրավարին.

6 ✠ Կիր. դձ. 7. օր մեծի պահոց. 13

Բ. Կիրակի Քառասնորդ. պահոց։

7 Բշ. դկ. 8. օր մեծի պահոց։ 14

8 Գշ. աձ. 9. օր մեծի պահոց։ 15

⊛ Լր. լուսնի. Անձրևոտային։

9 Դշ. ակ. 10. օր մեծի պահոց։ 16

☼ Արեգակն. 'ի Խոյն.

Օ **ՄԱՐՏ** Ն

Գարնանամուտ և հաւասարակած օր լինի տիւ և գիշեր հաւասար։

10 Եշ. բձ. 11. օր մեծի պահոց։ 17

11 Ուր. բկ. 12. օր մեծի պահոց։ 18

12 Շբ. գձ. 13. օր մեծի պահոց։ Ս. 19

Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին և միւս Կիւրղի եպ. և մօրն նորա Աննայի։

13 ✠ Կիր. գկ. 14. օր մեծի պահոց։ 20

Գ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Անառակին)։

14 Բշ. դձ. 15. օր մեծի պահոց։ 21

15 Գշ. դկ. 16. օր մեծի պահոց։ 22

☾ Վր. քռ. լս. Խոնաւ եղ.

16 Դշ. աձ. 17. օր մեծի պահոց։ 23

17 Եշ. ակ. 18. օր մեծի պահոց։ 24

18 Ուր. բձ. 19. օր մեծի պահոց։ 25

19 Շբ. բկ. Ջ0. օր մեծի պահոց։ Ս. 26

Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին և Ս. հայրապետացն մերոց Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն։

| Օ | ՄԱՐՏ | Ն |
|---|---|---|
| 20 | ✠ Կիր. գյ. Դ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Տնտեսին): | 27 |
| 21 | Բշ. գէ. 22. օր մեծի պահոց: | 28 |
| 22 | Գշ. դյ. 23. օր մեծի պահոց: | 29 |
| 23 | Դշ. դէ. 24. օր մեծի պահոց: ◉ Ծնունդն լուս. Փոփոխական եղ. | 1 |
| 24 | Եշ. ոյ. 25. օր մեծի պահոց: | 2 |
| 25 | Ուր. ոէ. 26. օր մեծի պահոց: Ռուսաց և յունաց՝ Աւետումն Ս. Աստուածածնի: | 3 |
| 26 | Շբ. բյ. 27. օր մեծի պահոց: Ս. Մանկանցն Քառասնից, որք 'ի Սեբաստիա կատարեցան: | 4 |
| 27 | ✠ Կիր. բէ. 28. օր մեծի պահոց: Ե. Կիր. Քառասնորդական պահոց (Դատաւորին): | 5 |
| 28 | Բշ. գյ. 29. օր մեծի պահոց: | 6 |
| 29 | Գշ. գէ. 30. օր մեծի պահոց: | 7 |
| 30 | Դշ. դյ. 31. օր մեծի պահոց: ◑ Առ. քառ. լս. Անձրևային եղ. | 8 |
| 31 | Եշ. դէ. 32. օր մեծի պահոց: | 9 |

Այս ամսուայ 1-էց մինչև 30-ը օրն աւելացել է 2 ժ. 4 րոպէ:

**ՄԱՐՏ.**— Խոյն: Այս համաստեղութեան տակ ծնուած տղան եռանդոտ, արդարադատ, քաղցրախօս, հետաքրքիր և կրքոտ բնաւորութեան տէր է լինում. ոչ տուած խօսքն է պահում և ոչ խօստումն կատարում:

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը գեղեցիկ է, արդարասէր, քաղցրեղէն սիրող, շատակեր և իւր նկատած բաների մասին երկար ու բարակ դատողութիւններ տուող, այդ պատճառով էլ՝ ստախօս, անխնայ գրպարտող ու շուտ զայրացող է լինում:

Այս ամսին ծնուածներն առհասարակ առեւտրի մէջ յաջողութիւն են ունենում, թէև ժլատ են լինում, միայն հոկտեմբեր ամսից զգուշանալու են:

---

Օ | Լ

# ԱՊՐԻԼ

30 ՕՐ

Ապր. ամիսը Հռոմուլոսի տարուայ երկրորդ ամիսն էր։ Որովհետև այս ամիսը գարնան երկրորդ ամիսն էր և օրերը քանի գնում էին տաքանում էին, բնութեան այս գործողութեան պատճառաւ անուանել են Ապրիլ—Aprilis որ լատիներէն նշանակում է արևային կամ տաքացնող. Հին Հռոմում այս ամսուայ մէջ կատարւում էր ի պատիւ պտղաբերութեան չաստուած Ցերերի փառաւոր տօն։ Մեծ հանդիսով տանում էին չաստուածների արձանները երեխայքը նժոյգների վերայ հեծած և ժողովուրդը ցնծութեան և ուրախութեան աղաղակներով, իսկ քրմերը ի պատիւ չաստուծոյ սպիտակ հանդերձներ հագած զոհաբերում էին ամսուլ կովեր։ Մեր նախնիք այս ամսին անուանել են Ահեկի։

---

Օ | ԱՊՐԻԼ | Լ

1 Ուր. ԺՋ. 33. օր Մեծի պահոց։ 10
Յերեկոյին Նախատօնակ։
2 ✠ Շբ. Ժէ. 34. օր Մեծի պահոց։ 11
Ս. ԳՐԻԳՈՐԻ Մերոյ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ, տօսկալն չարչարանացն և մտին ի Վիրապն։
3 ✠ Կիր. ԺՅ. 35. օր Մեծի պահոց։ 12
Զ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Գալստեան)։
4 Բշ. ԲԷ. 36. օր Մեծի պահոց։ 13
5 Գշ. ՓՏ. 37. օր Մեծի պահոց։ 14
6 Դշ. Փ!. 38. օր Մեծի պահոց։ Յերեկ Նախատօնակ։ 15
7 ✠ Եշ. ՓՋ. 39. օր Մեծի պահոց։ 16
ԱՒԵՏՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։
Լր. լուսնի. Անյբ։
8 Ուր. ՓԷ. 40. օր Մեծի պահոց։ 17
Արեգ. 'ի Ցուլն։
9 Շբ. ԺՋ. 41. օր Մեծի պահոց 18
Յիշատակ Ղազարու Յարութեան։
10 ✠ Կիր. Ժէ. Է. Կիր. ԾԱՂԿԱԶԱՐԴ։ Պահք։ Յերեկ. Դռնբացէք։ Յ. և Աւսայ' Մաղկազարդ։ 19
11 Աւագ-Երկուշաբթի ԲՋ. Պահք։ 20

| Օ | ԱՊՐԻԼ | Ն |
|---|---|---|
| 12 | Աւագ-Երեքշաբթի բվ. Պահք։ Յիշատակ տասն կուսանաց։ | 21 |
| 13 | Աւագ-Չորեքշաբթի գյ. Պահք։ | 22 |
| 14 | * Աւագ-Հինգշաբթի գվ. Պահք։ ՅԻՇԱՏԱԿ ՈՏՆԼՈՒԱՑԻ։ Եւս Ռուս | 23 |
| | ☾ Վր. քռ. լս. Հողմախառն։ | |
| 15 | Աւագ-Ուրբաթ փյ. Պհք ։Յիշ. Չարչարանաց և Խաչելութեան. Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ | 24 |
| 16 | Աւագ-Շաբաթ փվ. Ճրագալոյց Ս. Յարութեան։ Նաւակատիք։ Յերեկոյեան զկնի պատարագի նախատօնակ։ | 25 |
| 17 | * Կիր. ռյ. ԶԱՏԻԿ։ (Ս. Յարութիւն Քրիստոսի)։ Ուտիք է մեզ անմիջոց զՀամբարձումն։ Եւս Յունաց և Ռուսաց, որոց ուտիք է ցնոր Կիրակէ։ | 26 |
| 18 | * Բշ. ռվ. 2. օր Զատկի։ Յիշատակ մեռելոց։ | 27 |
| 19 | * Գշ. բյ. 3. օր Զատկի։ | 28 |
| 20 | Դշ. բվ. 4. օր Զատկի։ | 29 |
| 21 | Եշ. գյ. 5. օր Զատկի։ | 30 |

| Օ | ԱՊՐԻԼ | Ն |
|---|---|---|
| | ⊛ Ծնունդն լուսնի. Անհաստատ եղ. | |
| 22 | Ուր. գվ. 6. օր Զատկի։ | 1 |
| 23 | Շբ. դյ. 7. օր Զատկի։ Յիշատակ գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի։ | 2 |
| 24 | * Կիր. դվ. 8. օր Զատկի։ Նոր-Կիւրակէ.(—Կրկնազատիկ)։ | 3 |
| 25 | Բշ. ռյ. 9. օր Յինանց։ | 4 |
| 26 | Գշ. ռվ. 10. օր Յինանց։ | 5 |
| 27 | Դշ. բյ. 11 օր Յինանց։ | 6 |
| 28 | Եշ. բվ. 12. օր Յինանց։ | 7 |
| | ☽ Առ. քռ. լս. Գարնանային եղ. | |
| 29 | Ուր. գյ. 13 օր Յինանց։ | 8 |
| 30 | Շբ. գվ. 14. օր Յինանց։ | 9 |

—

Այս ամսուս 1-ից մինչև 31-ը օրը աւելացել է 1 ժ. 4 րոպէ։

ԱՊՐԻԼ.—Ցուլն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան աներկիւղ է, կորուկ, զայրացկոտ, խստասիրտ և իւր թշնամիներին հալածող։ Թէև ունենար

բայց ժլատ․ բաղդաւորութեամբ կըփայլի և դրան նպաստող դէպքերը իր ցանկութիւնները կըկատարեն։ Նա է, կըճանապարհորդի։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը բնաւորութեամբ ուժեղ, եռանդոտ, աշխոյժ, թէև բնութեամբ անժուժկալ կըլինի. միայն իբրև ամուսին խոնարհ և հաւատարիմ կըլինի, եթէ իր և իր ամուսնու բնաւորութիւններն իրար համապատասխան են։

Ապրիլ ամսին ծնուածներն առհասարակ ոտքերի ուռուցքից զգուշանալու են։ Իրենց կեանքը երկու մասի կըբաժանուի. առաջին մասը շատ վտանգալից կանցնի և կըտևի մինչև 33 տարեկան հասակը։

---

0 Լ

# ՄԱՅԻՍ

31 ՕՐ

Մայիս ամիսը, ինչպէս կարծում են, առացել է իր անունը լատինական majores բառից, որ նշանակում է հին։ Որովհետև այս ամիսը գարնան վերջին ամիսն էր, սորա համար ընծայած էր ծերոց և նախնեացը, և այդ պատճառով արգելուած էր այս ամսին ամուսնանալը։ Մայիսը գարնանային ամիս լինելով զանազան ազգերի մէջ տօնվում էր գարնանային հանդէսներով, որի մէջ մեծ դեր էին խաղում պատանիք և աղջկունք, ծաղկունք ու կանաչ ճիւղեր։ Մեր նախնիք անուանել են այս ամիսը Մարերի։

1 ✱ Կիր․ գշ․ 15 օր Յինանց։ Աշխարհամատրան Կիւրակէ (Կանաչ Կիւրակէ)։ 10

| Ն | ՄԱՅԻՍ | Հ |
|---|---|---|
| 2 | Բշ. գէ. 16. օր Ցինանց։ | 11 |
| 3 | Գշ. դբ. 17. օր Ցինանց։ | 12 |
| 4 | Դշ. դէ. 18. օր Ցինանց։ | 13 |
| 5 | Եշ. բբ. 19. օր Ցինանց։ | 14 |
| 6 | Ուր. բէ. 20. օր Ցինանց։ ☉ Լրումն լուսնի. Կէսօր եղ. | 15 |
| 7 | Շբ. զբ. 21. օր Ցինանց։ | 16 |
| 8 | Դ. Կիր. զէ. 22 օր Ցինանց։ (Կարմիր-Կիւրակէ)։ ☼ Արեգակն 'ի Երկաւորն։ | 17 |
| 9 | Բշ. գբ. 23. օր Ցինանց։ Ռուսաց Տօն փոխադրութեան նշխարաց Ս. Նիկողայոսի Սքանչելագործի։ | 18 |
| 10 | Գշ. գէ. 24. օր Ցինանց։ | 19 |
| 11 | Դշ. դբ. 25. օր Ցինանց։ | 20 |
| 12 | Եշ. դէ. 26. օր Ցինանց։ | 21 |
| 13 | Ուր. բբ. 27 օր Ցինանց։ ☾ Վր. քռ. լռ. Բարեխառն եղ. | 22 |
| 14 | Շբ. բէ. 28. օր Ցինանց։ | 23 |
| 15 | ✠ Կիր. զբ. 29. օր Ցինանց։ Ե. Կիր. Տօն Երեւման Ս. Խաչի։ | 24 |
| 16 | Բշ. զէ. 30. օր Ցինանց։ | 25 |
| 17 | Գշ. գբ. 31. օր Ցինանց։ | 26 |

| Ն | ՄԱՅԻՍ | Հ |
|---|---|---|
| 18 | Դշ. գէ. 32. օր Ցինանց։ | 27 |
| 19 | Եշ. դբ. 33. օր Ցինանց։ | 28 |
| 20 | Ուր. դէ. 34. օր Ցինանց։ | 29 |
| 21 | Շբ. բբ. 35. օր Ցինանց։ ● Նն. լս. Փոփոխական | 1 |
| 22 | ✠ Կիր. բէ. Զ. Կիւրակէ։ | 2 |
| 23 | Բշ. զբ. 37. օր Ցինանց։ | 3 |
| 24 | Գշ. զէ. 38. օր Ցինանց։ | 4 |
| 25 | Դշ. գբ. 39. օր Ցինանց։ | 5 |
| 26 | ✠ Եշ. գէ. 40. օր Ցինանց։ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ։ Նաեւ Ռուսաց և Յունաց։ | 6 |
| 27 | Ուր. դբ. 41. օր Ցինանց։ Պահք։ | 7 |
| 28 | Շբ. դէ. 42. օր Ցինանց։ ☽ Առ. քառ. լուսնի. Մեղմ անձր. | 8 |
| 29 | ✠ Կիր. բբ. Երկրորդ Ծաղկազարդ։ | 9 |
| 30 | Բշ. բէ. 44. օր Ցինանց։ | 10 |
| 31 | Գշ. զբ. 45. օր Ցինանց։ | 11 |

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրն աւելացել է 1 ժ. 4 րոպէ։

ՄԱՅԻՍ.—Երկաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան

ինչպէս արտաքուստ գեղեցիկ է, այնպէս էլ ի ներքուստ հոգով բարի, խելօք, շրջանկատ, մեծահոգի և մասամբ կասկածոտ, ճարպիկ, խորամանկ և ազ-տ արհեստների սիրահար։ Այդպիսիների սէրը կարծես սիրոյ և բարեկամութեան համար է ստեղծուած։ Եւ բաղդաւոր են լինում, եթէ իրենց կեանքը կապում են այնպիսի կնոջ կամ բարեկամի հետ, որոնք նոյնպէս սոյն համաստեղութեան տակ են ծնուած։

Իսկ ծնուած աղջիկը լինում է գեղեցիկ, բարի, պարզ և հեզ. Իրենից տարիքով փոքր մարդու հետ բախտաւորութիւն չի գտնիլ, բացի իր նման բնաւորութիւն ունեցող պատուական ամուսնուց։

Մայիսին ծնուածներն առհասարակ, մարդ թէ կին, գիտութեանց սիրահար են լինում, գործերի մէջ հմուտ, բնաւորութեամբ դիւրաթեք և փափկամարմին։ Իսկ 31 տարեկան հասակում զգոյշ պէտք է լինեն հիւանդանալուց։



# ՅՈՒՆԻՍ

## 30 ՕՐ

Յունիս (լատին. Iunius՝ ամիսը Հռովմայեցւոց մէջ ի պատիւ պատանեաց նուիրուած էր հպարտութեան չաստուածուհուն Յունոնային, որից և ստացել է իր անունը։ Ամառուայ առաջին և Հռոմուլոսի կարգած չորրորդ ամիսն էր։ Այս ամսին մեր նախնիքն անուանում էին Մարգաց։ Երեք մարգագետիններ հնձելու ամիս, ինչպէս հայոց-դրացի վրացիք հ մայ էլ անուանում են այս ամսին Թիբաթվէ, որ կը նշանակէ խոտ հնձելու ամիս։

1 Դշ. ֆի. 46. օր Յինանց։ Պահք։ 12
2 Եշ. ֆչ. 47. օր Յինանց։ 13
3 Ուր. ֆլ. 48. օր Յինանց։ Պահք։ 14
4 Շբ. ֆյ. 49. օր Յինանց։ 15
5 ✱ Կիր. ֆլ. Յիսներորդ օր 'ի Զատկէն։ ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ)։ Բարեկենդան Եղիա- 16

| Օ | ՅՈՒՆԻՍ | Լ |
|---|---|---|
| | կան պահոց։ Ռուսաց և Յունաց Նոր Պենտեկոստէ։ | |
| | ◐ Լրումն լս. Շաբթ։ | |
| 6 | Բշ. բծ. 2. օր Հոգեգալ. Պահք։ Ռուսաց՝ երկրորդ օր Հոգեգալս. | 17 |
| 7 | Գշ. բկ. 3. օր Հոգեգ. Պահք։ | 18 |
| 8 | Դշ. գծ. 4. օր Հոգեգ. Պահք։ | 19 |
| 9 | Եշ. գկ. 5. օր Հոգեգ. Պահք։ | 20 |
| | ☼ Արեգ. 'ի Խեցգետինն մտանէ Ամառնամուտ և արևադարձ. ցերեկն սկսանի կարճանալ—գիշերն երկարիլ։ | |
| 10 | Ուր. դծ. 6. օր Հոգեգ. Պահք։ | 21 |
| 11 | Շբ. դկ. 7. օր Հոգեգալստեան։ | 22 |
| 12 | * Կիր. ածխ. Ա. Կիր. Յարութեան։ Յիշատակ Եղիայի Մարգարէին. Յեր. Նախատօնակ։ Հարսանիք։ | 23 |
| | ☾ Վր. քռ. լս. Շաբ եղ.։ | |
| 13 | Բշ. ակ. Ս. կուսանացն Հռիփսիմեանց։ Յերեկ. Նախատօնակ։ | 24 |
| 14 | Գշ բծ. Ս. կուսանացն Գայանեանց։ | 25 |

| Օ | ՅՈՒՆԻՍ | Լ |
|---|---|---|
| 15 | Դշ. բկ. Պահք։ Յերեկոյեան Նախատօնակ։ | 20 |
| 16 | Եշ գծ. Ս. Յովհաննու Կարապետին և Աթանագինէ եպիսկոպ. | 27 |
| 17 | Ուր. գկ. Պահք։ Յերեկոյեան Նախատօնակ։ | 28 |
| 18 | * Շբ. դծ. Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ—Ելն 'ի Վիրապէն։ | 29 |
| 19 | * Կիր. դկ. Բ. Կիր. զկնի Հոգեգ. ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ։ (Կատարի Հանդէս յամենայն եկեղեցիս Հայաստանեայց)։ Հարսանիք։ | 30 |
| | ◉ Ծնունդն լս. [illegible]։ | |
| 20 | Բշ. ածխ. Ս. մկն. Բեթղեհէմի, Ակակիոսի վկային, Մովկեմայ քահանային և Կոնտրատիոսի զինուորին։ | 1 |
| 21 | Գշ. ակ. Ս. կուսանացն Նունեայ և Մանեայ։ | 2 |
| 22 | Դշ. բծ. Պահք։ | 3 |
| 23 | Եշ. բկ. Ս. իշխանացն Սահակայ և Յովսէփայ և Ս. վկայիցն Սարգսի և Բագոսի։ | 4 |

Օ | ՅՈՒՆԻՍ | Լ

24 Ուր. փյ. Պահք։ 5

25 Շբ. բլ. Ս. ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾԻ 6
հայրապետին Մրոյ և Խադայ եպիսկոպոսին:

26 ✠ Կիր. գյ. Գ. Կիր զկնի Հոգեգ. Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց։ 7

☽ Առ. քառ. լուս. Խառն եղանակ.

27 Բշ. դլ. Պահք։ Ս. Եպիփանու Կիպրացւոյն, Բաբելայ հայրապ. և 3 աշակերտացն նորին։ 8

28 Գշ. ոյ. Պահք։ Ս. Կոստանդիանոսի Թագաւորին և մօրն նորա Հեղինէի։ 9

29 Դշ. զլ. Պահք։ 10
Ռուսաց՝ և Յ. Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։

30 Եշ. բյ. Պահք։ Ս. Թէոդիտոսի Գաղատացւոյն, Թալէլեայ բժշկին և 7 կուսանացն, որք 'ի յԱնկիւրեայ կատարեցան։ 11

—

Այս ամսույ 1-ից մինչև 30-ը օրը պակասել է 1 ժ. 19 րոպէ։

ՅՈՒՆԻՍ.—Խեցգետինն։ Այս համաստեղութեան տակ ծնուածը լինում է վիճասէր, կամակոր, խորամանկ, մոլի և ամեն դէպքում աւելի իւր ինքնահաճոյքին և ցնորքներին հետևող՝ քան առողջ դատողութեանը լսող։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկն ինքնասէր է, գործունեայ, աշխատասէր, զգոյշ, արթուն, ամօթխած, հետաքրքիր, ինքնահաւան և մի քիչ ստախօս։

Յունիսին ծնուածներն առհասարակ աչքի են ընկնում իրենց ուշիմ և սրամիտ բնաւորութեամբ։ Ուրիշի անպհականութիւնից հարստացող են և նշանաւոր մարդկանցից պաշտպանութիւն գտնող. Գինուց միայն զգուշանալու են։

—

Օ | Լ

# ՅՈՒԼԻՍ

## 31 ՕՐ

Յուլիսը Հռոմուլոսի կարգադրած տարուայ ամառուայ երկրորդ ամիսն էր և համարվում էր — Հռոմուլոսեան — տարեշրջանի հինգերրորդ ամիսը։ Թէև այս ամիսը—Հռոմայ Գրիգոր VII պապի ժամանակ կազմեցին Գրիգորեան համարուած տոմարով, բայց այս Յուլիս—այսինքն լատ. Iulius ամիսը—իր անունը ստացել է Հռոմայեցւոց կայսր Յուլիանոսից, որի ժամանակ և որի հրամանով էլ ուղղեցին օրացոյցը—Յուլեան տարեշրջան անունով։ Մեր նախնիք այս ամսին անուանել են Հրոտից (երեք հուր արձակող կամ հրային, որովհետև տարուայ ամենաշոգ ամիսն է)։ Իսկ վրացիք անուանում են Մկաթաթվէ, որ նշանակում է արտը ընձելու ամիս.

Օ | ՅՈՒԼԻՍ | Լ

1 Ուր. ԲԿ. Պահք։ Ցերեկոյեան նախատօնակ։ 12

2 ✠ Շբ. ԳԿ. Գիւտ նշխարացն Ս. ԳՐԻԳՈՐԻ Լուսաւորչին մերոյ։ 13

3 * Կիր. ԳԿ. Դ. Կիր. զկնի Հոգեգալստեան։ Հարսանիք։ 14

4 Բշ. ԴԿ. Ս. վկայիցն Անտոնինոսի, Թէոփիլոսի, Անէքտոսի և Փոտինոսի։ 15

☉ Լրումն լուս. Տեղ տեղ անձրև։

5 Գշ. ԴԿ. Ս. Դանիէլի մարգարէին և երից մանկանցն-Սեդրակայ, Միսակայ և Աբեդնագովի։ 16

6 Դշ. ԵԿ. Պահք։ Ցերեկոյեան նախատօնակ։ 17

7 * Եշ. ԵԿ. Սրբոց Թարգմանչացն մերոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՊԱՅ։ 18

8 Ուր. ԶԿ. Պահք։ 19

9 Շբ. ԶԿ. Ս. Տրդատայ Թագաւորին մերոյ և Աշխէն տիկնոջն և Խոսրովադխտոյն։ Ցերեկոյեան նախատօնակ։ 20

10 * Կիր. ԷԿ. Ե. Կիր. զկնի Հոգ. 21

| 0 | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|---|---|
| | Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի։ Տարաննիք։ | |
| | ☼ Արեգակն ՚ի յԱռիւծն։ | |
| 11 | Բշ. թյ. Ս. Կալիստրատոսի և 49 վկայիցն և Ղուկիանոսի քահանային։ | 22 |
| | ☾ Վեր. քռ. լս. Կոլխոռոսթն եգ։ | |
| 12 | Գշ. փյ. Ս. Զաքարիայի մարգարէին։ | 23 |
| 13 | Դշ. փյ. Պահք։ | 24 |
| 14 | Եշ. ոյ. Ս. Եղիսէի Մարգարէին։ | 25 |
| 15 | Ուր. ոյ. Պահք։ | 26 |
| 16 | Շբ. բյ. Ս. Երկոտասանից Առաքելոցն Քրիստոսի և Ս. Պօղոսի Երեքտասան Առաքելոյն։ | 27 |
| 17 | ✠ Կիր. բյ. Զ. Կիր. զկնի Հոգեգ. Բարեկենդ. Վարդավառի պահոց։ | 28 |
| 18 | Բշ. փյ. 1. օր Վարդավ. պահոց։ | 29 |
| 19 | Գշ. փյ. 2. օր Վարդավ. պահոց։ | 1 |
| | ◉ Մն. լուս. Տօր եզանակ։ | |
| 20 | Դշ. ոյ. 3. օր Վարդավ. պահոց։ | 2 |
| 21 | Եշ. փյ. 4. օր Վարդավ. պահոց։ | 3 |
| 22 | Ուր. ոյ. 5. օր Վարդավ. պահոց։ | 4 |

| 0 | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|---|---|
| | Յ. և Ռուսաց՝ Մարիամու Մագդաղենացւոյն։ | |
| 23 | Շբ. ոյ. ՅԻՇԱՏԱԿ ՏԱՊԱՆԱԿԻՆ ՀՆՈՅ և ՏՕՆ ՆՈՐՈՅՍ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ։ Նաւակատիկ։ | 5 |
| 24 | ✠ Կիր. բյ. ՎԱՐԴԱՎԱՌ։ Մեծահանդէս օր ուխտի Մշոյ Ս. Կարապետ վանքի և Տփխիսայ Ս. Կարապետ եկեղեցւոյն։ Մէջոց ուտիք երկու շաբաթ։ | 6 |
| 25 | ✠ Բշ. բյ. 2 օր Վարդավառի։ Յիշատակ մեռելոց։ Մեծահանդէս օր ուխտի Միրանաւորի Ս. Աստուածածին եկեղեցւոյն Տըփխիսայ (Կրծանիսի)։ | 7 |
| 26 | Գշ. փյ. 3. օր Վարդավառի։ | 8 |
| | ☽ Ար. քռ. լ. Սոոփէն շոգեր։ | |
| 27 | Դշ. փյ. Պահք։ | 9 |
| 28 | Եշ. փյ. Ս. Եսայեայ մարգարէին։ | 10 |
| 29 | Ուր. ոյ. Պահք։ Ցերեկոյեան Նախատօնակ։ | 11 |
| 30 | ✠ Շբ. ոյ. Ս. ԹԱԴԷՈՍԻ Առաքելոյն և Ս. Սանդխտոյ կուսին։ | 12 |

0 **ՅՈՒԼԻՍ** Լ

31 ✠ Կիր. Գ. Բ. Կիր. զկնի Վարդավառի Հարսանիք։ 13

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը պակասել է 1 ժ. 26 րոպէ։

ՅՈՒԼԻՍ.—Առիւծն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան լինում է պարզասիրտ, համարձակ, քաջ, առատաձեռն, ազատամիտ, մեծահոգի և շատ անգամ հպարտ. իր ազնիւ հոգովը (բնաւորութեամբ) հակուած է դէպի բարեպաշտութիւն և ցաւակցութիւն։ Միևնոյն ժամանակ ծաղրասէր է, ուրիշներին զայրացնող ու կրքոտ։ Արտաքին գեղեցկութեան շնորհիւ, փափուկ սեռին հաճոյանալու կերպը գիտէ և երկար փաղաքշանքներ շռայլելուց յետոյ հասնում է իր նպատակին։

Իսկ ծնուած աղջիկը զուարթ է, շնորհալի, բարկացող, համարձակ, չարամիտ, վրիժառու, բայց սիրելի և իր սիրելիին անչափ մեծարող։

Յուլիսին ծնուածների ամենաբախտաւոր ժամանակն իրենց հասակի միջին տարիքն է և համենայաջող ամիսն՝ օգոստոսը։ Ամենից վտանգաւոր տարին իրենց հասակի՝ 42-րդ տարին է, որ ժամանակ պէտք է զգուշանալ։

—

Օ | Ն

# ՕԳՈՍՏՈՍ

## 31 ՕՐ

Օգոստոս ամիսը հռոմայեցիք սկզբում անուանել էին Սեկստիլէ, որ լատ. նշանակում է վեցերորդ։ Քրիստոսից 33 տարի առաջ, ի պատիւ Հռովմայեցւոց Օգոստոս կայսեր, անուանեցին Օգոստոս, և էր ամառուայ վերջին ամիսը։ Մեր նախնիք այդ ամսին անուանում էին Նաւասարդ, որովհետև Նոր տարուայ առաջին ամիսն էր և տարեթիւը այս ամսուայ 11-ից էին սկսում ի յիշատակ Ջրհեղեղի վերջանալուն։ Նաւասարդ նշանակում է Նաւ-աստ-է-արդ, կամ Նաւը հաստատ արդ։

1 Բշ. բյ. Ս. Կիպրիանոսի եպիսկո- 14
պոսին և 45 վկայից և Ս. կուսանացն Յուստինեայ, Եփիմեայ և Քրիստինեայ։
2 Գշ. բյ. Ս. Աթանագինեայ եպիս- 15

Օ | ՕԳՈՍՏՈՍ | Ն

կոպոսին և տասն աշակերտացն և հինգ վկայիցն։
3 Դշ. գյ. Պահք։ 16
☉ Լրումն լուսն. Տեղ տեղ անձրև։
4 Եշ. գյ. Ս. Նախահարցն Ադա- 17
մայ, Աբէլի, Սեթայ, Ենովքայ, Ենովսայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յովսէփայ, Յակովբայ, Մովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեդէոնի և այլոց սրբոց նախահարցն։
5 Ուր. դյ. Պահք։ 18
6 Շբ. դյ. Եփեսոսի Ս. ժողովոյն 19
Երկու հարիւր հայրապետացն։
Յ. և Ռուսաց Վարդավառ։
7 ✠ Կիր. ոյ. Զ. Կիր. զկնի Վարդ. 20
Բարեկեն. Ս. Աստուած. պահոց։
8 Բշ. ոյ. 1. օր Ս. Ածած. պահոց։ 21
9 Գշ. բյ. 2. օր Ս. Ածած. պահոց։ 22
10 Դշ. բյ. 3. օր Ս. Ածած. պահոց։ 23
☾ Վր. քա. լս. Փոփոխական։

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Ն |
|---|---|---|
| 11 | Եշ. գյ. 4. օր Ս. Ածած. պահոց։ ☼ Արեգակն 'ի Կոյսն մտանէ։ Ըստ բուն տոմարի մերում նաւասարդ և տարեմուտ 4397 թ. և եկեղ. 1344 թ. | 24 |
| 12 | Ուր. գէ. 5. օր Ս. Ածած. պահոց։ | 25 |
| 13 | Շբ. դյ. Տօն Շողակաթի Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ըստ տեսլեան Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ։ Նաւակատիք։ Ցերեկոյին նախատօնակ։ | 26 |
| 14 | ✠ Կիր. դէ. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Աստուածածնի. Զկնի պատարագի կատարի օրհնութիւն խաղողոյ։ Ինն օր նախատօնակ։ Միջոց ուտիք երեք շաբաթ։ | 27 |
| 15 | ✱ Բշ. այ. 2. օր Վերափոխման։ Յիշատակ մեռելոց։ Ց. և Ռուսաց՝ Վերափոխումն Ս. Աստուածածնի։ | 28 |
| 16 | Գշ. աէ. 3. օր Վերափոխման։ | 29 |
| 17 | Դշ. բյ. 4. օր Վերափ. Պահք։ ◉ Մն. լս. Շաբէ։ | 1 |
| 18 | Եշ. բէ. 5. օր Վերափոխման։ | 2 |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Ն |
|---|---|---|
| 19 | Ուր. գյ. 6. օր Վերափ. Պահք։ | 3 |
| 20 | Շբ. գէ. 7. օր Վերափոխման։ | 4 |
| 21 | ✠ Կիր. դյ 8. օր Վերափոխման։ | 5 |
| 22 | Բշ. դէ. 9. օր Վերափոխման։ | 6 |
| 23 | Գշ. այ. Ս. Յովակիմայ և Աննայի ծնողաց Ս. Աստուածածնի և կանանցն Իւղաբերից։ | 7 |
| 24 | Դշ. աէ. Պահք։ ◑ Առ. քռ. լս. Լ— եղ. | 8 |
| 25 | Եշ. բյ. Ս. Երեմեայ մարգարէին։ Ռուսաց՝ Յիշատակ նուաճման արեւելեան Կովկասու։ | 9 |
| 26 | Ուր. բէ. Պահք։ Լատ. Ծնունդ Ս. Աստուածածնի։ | 10 |
| 27 | Շբ. գյ. Ս. Առաքելոցն Թումայի, Յակովբայ և Շմաւոնի։ Ցերեկոյին նախատօնակ։ | 11 |
| 28 | ✱ Կիր. գէ. Գ. Կիր. զկնի Վերափ. Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի։ | 12 |
| 29 | Բշ. դյ. Ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և ս. վկայիցն Գոհարի- | 13 |

նեայ, Ծամիղէսի, Տուքիկոսի և Ռատիկոսի։

Ց. և Ռուսաց՝ Գլխատումն Ս. Յովհաննու Մկրտչին։

30 Կշ. փլ. Ս. մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի և Զաքարիայի հօրն Ս. Յովհաննու Մկրտչի։ 14

Ռուսաց՝ Փոխադրութիւն նշխարաց Ս. Ալէքսանդր Նևսկացւոյ։

31 Կշ. ոյ. Պահք։ 15

Կր. լս. Անճառափառ խղ.

—

Այս ամսուայ 1-ից մինչև 30-ը՝ օրը պակասել է 1 ժ. 24 րոպէ

ՕԳՈՍՏՈՍ.—Կոյսն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան բարեկազմ է, անկեղծ, մեծահոգի, խելօք, ողջախոհ, համեստ և բարեգործ։ Նեանքի մէջ վարուելու կերպը չիմանալով ու ամեն տեսակ հնարքներից զուրկ լինելով՝ շատ-շատ խաբւում է և յափշտակւում։

Իսկ ծնուած աղջիկը ամօթխած է, ժուժկալ, աչքերը գեղեցիկ և երեսի գծագրութիւնը որոշ։ Նաև կ'ամուսնանայ, իր ընտանիքում սիրելի, բարեպաշտ, հաւատարիմ և աննման մայր կը լինի, իսկ իր որդիքը, որոնք աւելի իգական սեռին կը պատկանին, նոյնպէս մինը միւսից աւելի գգուելի ու գեղեցիկ կը լինին։

—

Օ | Լ

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

30 ՕՐ

Սեպտեմբեր ամսոյս անունը ծագում է Լատինական (septembre) բառից։ Այսպէս անուանեց Հռոմուլոսը տարուայ եօթներորդ ամիսը, որ աշունքուայ առաջին ամիսն էր։ Մեր նախնիք այս ամիսը անուանել են Հոռի։

1 Եշ. աի. Ս. Յովհաննու Կարապետին և Յոբայ արդարոյն։ 16
2 Ուր բյ. Պահք։ 17
3 Շբ. բի. Տօն Նիկիոյ Սուրբ ժողովոյ 318 հայրապետացն։ 18
4 ✠ Կիր. գյ. Դ. Կիր. զկնի Վերափոխման։ 19
Բարեկենդան Ս. Խաչի պահոց։
5 Բշ. գի. 1. օր Ս. Խաչի պահոց 20
6 Գշ. դյ. 2. օր Ս. Խաչի պահոց։ 21
7 ☩ Դշ. դի. 3. օր Ս. Խաչի պահոց։ Յերեկոյին Նախատօնակ։ 22

Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Խ

☾ Վր. քռ. լս. Ջօղ Եղ.
8 ✠ Եշ. այ. 4. օր Ս. Խաչի պահոց։ Տօն ԾՆՆԴԵԱՆ Ս.ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ 'ի յԱննայէ.—Եւ Յ. և Ռուսաց։ 23
9 Ուր. աի. 5. օր Ս. Խաչի պահոց։ 24
10 Շբ. բյ. Տօն Ս. եկեղեցւոյս ի Նաւակատիս Ս. Խաչին։ Նաւակատիկ։ 25
☼ Արեգ. 'ի Կշիռն մտանէ։ Աշնանամուտ և հաւասարակած —Տիւ և գիշեր հաւասար։
11 ✠ Կիր. բի. ԽԱՉՎԵՐԱՑ։ 26
12 ✠ Բշ. գյ. 2. օր Տօն Ս. Խաչի։ Յիշատակ մեռելոց։ 27
13 Գշ. գի. 3. օր Տօն Ս. եկեղեցւոյ։ 28
14 Դշ. դյ. 4. օր. Տօն Ս. եկ. Պահք։ Յ. և Ռուսաց՝ Խաչվերաց։ 29
15 Եշ. դի. 5. օր Տօն Ս. եկեղեցւոյ։ 30
● Ծնունդ լս. Անձրևաբեր եղ։
16 Ուր. այ. 6. օր Տօն Ս. Խաչի։ Պահք 1
17 Շբ. աի. 7. օր Տօն Ս. Խաչի։ 2
18 ✠ Կիր. բյ. Բ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի։ 3

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | Լատինաց՝ Տօն Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի սահմանս Հռոմայ և Նէապօլսոյ։ | |
| 19 | Բշ. բէ. Պահք։ Ս. Մամասայ, Փեղեկտեմոնի և Սիմէոնի Սեւնակեցւոյն։ | 4 |
| 20 | Գշ. գյ. Պահք։ Ս. կուսանացն Փեւփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ դստեր մեծին Վարդանայ։ | 5 |
| 21 | Դշ. գէ. Պահք։ | 6 |
| 22 | Եշ. դյ. Պահք։ Ս. հայրապետացն Բարդղամու, Անթիմոսի և Երանոսի։ | 7 |
| | ◑ Առ. քռ. լս. Խոնաւ եղանակ։ | |
| 23 | Ուր. դէ. Պահք։ | 8 |
| 24 | Շբ. եյ. Ս. Գէորգայ զօրավարին, Ադոկտոսի և Ռոմանոսի երգեցողին։ | 9 |
| 25 | ✠ Կիր. եէ. Գ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Տօն Վարագայ Ս. Խաչին։ Հարսանիք։ Տասնեմէկերորդ տարեդարձ Ս. Օծման Տ.Տ. Մկրտչի Ա. ամենայն Հայոց Կաթողիկոսի։ | 10 |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 26 | Բշ. բյ. Ս. Դաւթի Դվնեցւոյն և Ս. վկայիցն Ղամբէոսի և Ղամբէուհւոյն։ | 11 |
| | Ռուսաց՝ Ննջումն Ս. Յովհաննու Աւետարանչին։ | |
| 27 | Գշ. բէ. Ս. Եւստաթէոսի և կնոջ նորա Թէոփիստոսի և երկուց որդւոցն և կուսանացն Երմոնեայ և Նեքտառինեայ։ | 12 |
| 28 | Դշ. գյ. Պահք։ | 13 |
| 29 | Եշ. գէ. Ս. իշխանացն Սահակայ՝ և Համազասպայ։ | 14 |
| 30 | Ուր. դյ. Պահք։ | 15 |
| | Ռուսաց՝ Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ և Ս. Կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց։ | |
| | ◎ Լր. լուսնի. Պարզկայ։ | |

—

Այս ամսուս մէկից մինչև 30-ը օրը պակասել է 4 ժ. 14 րոպէ։

ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Կշիռ։ Այս համաստեղութեան տակ ծնուած

տղան վիճասէր է, կամակոր, ծաղրաբան և սաստիկ իւր բարեկամութեանց ետևից ընկնող. ունի և լաւ ձևեր, ճառախօսութեան ձիրք, բարեհամբոյր է, միայն երբ իւր շահերը պահանջում են՝ իւր տուած խոստումը շատ հեշտ է դրժում և իւր ունեցած զգաստութեան շնորհիւ, շատ վտանգներից հեշտութեամբ զերծ մնում։

Իսկ ծնուած աղջիկը սիրելի է, ուրախ, հրապուրիչ ձևերով օժտուած, բախտաւոր և բազմաթիւ երկրպագուներ ունեցող. միայն զգաստ պէտք է լինի, որովհետև վերջն անպատճառ զղջալու է։

Սեպտեմբերին ծնուածներն առհասարակ ինչպէս 33 տարեկան հասակում, այնպէս էլ ջրից միշտ զգուշանալու են։

---



# ՅՈԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ

Հին ժամանակները Հռոմում, այս ամսի 15-ին ի պատիւ պատերազմի չաստուած Մարսի, զոհաբերում էին նժոյգներ և Հռոմուլոսի կարգաւորած տա. րուայ ութերորդ ամիսն էր, այս պատճառաւ անուանուեցաւ octobre, որ լատիներէն նշանակում է ութերորդ։ Այս ամիսը աշունքուայ միջի ամիսը լինելով, հին ազգերի մէջ այս ամսում կատարվում էին ժողովրդական տօներ—հանդէսներ, դաշտային աշխատանքի աւարտման և այգեկոյթի պատճառաւ։ Իսկ այս ժամանակ որովհետև Կովկասում այգեկոյթ է լինում, ինչպէս ժողովուրդը ասում է (բա ղաքաղ) և գինի են քամում, դորա համար էլ մեր դրացի վրացիք այս ամսին ող-

Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն

ղակի անուանում են Դվինօրխա-
թվլէ, գինիներու-ամիս։ Մեր նախ-
նիք անուանում էին այս ամսին
Սահմի։
1 Շբ. ժգ. Ս. Եօթանասուն և Եր-
կու աշակերտացն Քրիստոսի։ 16

2 ✠ Կիր. ժդ. Դ. Կիր. զկնի Ս. Խաչի։ 17
Հարսանիք։
3 Բշ. ժե. Ս. Փոկասու հայրապե- 18
տին և Երանոսի հետևողին Առա-
քելոյն։
4 Գշ. ժզ. Ս. կուսանացն Թեկղէ, 19
Վարվառեայ և Պեղեգեայ։
5 Դշ. ժէ. Պահք։ 20
6 Եշ. ժը. Ս. Պանտալեոնի բժշկին, 21
Երմոլեայ քահանային և Եւպրակ-
սեայ կուսին։
7 Ուր. ժթ. Պահք։ 22
☾ Վր. քռ. լս. Հողմախառն։
8 Շբ. ի. Ս. Թարգմանչաց վար- 23
դապետացն մերոց Մեսրոպայ,
Եղիշէի, Մովսէսի քերթողին,

Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն

Դաւթի անյաղթ—փիլիսոփային,
Գրիգորի Նարեկացւոյն և Ներ-
սէսի Կլայեցւոյն։
9 ✠ Կիր. իա. Ե. Կիր. զկնի Ս. Խաչի։ 24
հարսանիք։
10 Բշ. իբ. Գիւտ նշխարաց Ս. Գրիգո- 25
րիսի Աղուանից կաթողիկոսի և
Ս. Հարցն Թաթլոյ, Վարոսի և
Թովմասու, Անտօնի Կրօնիդեայ և
եօթն խոստովանողացն՝ որք
Յ'իննակնեայ վանսն կատարեցան։
© Արեգ. 'ի Կարիճն մտանէ։
11 Գշ. իգ. Ս. Առաքելոցն Անանիայի 26
Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպ.,
Յովհաննու, Շիղայի և Սիղիանոսի։
12 Դշ. իդ. Պահք։ 27
13 Եշ. իե. Ս. Դիոնեսիոսի Արիսպա- 28
գացւոյն, և Ս. Առաքելոցն Տիմո-
թէոսի և Տիտոսի։
14 Ուր. իզ. Պահք։ 29
15 Շբ. իէ. Ս. Աւետարանչացն 1
Մատթէոսի, Մարկոսի, Ղուկա-
սու և Յովհաննու։

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|
| | ● Ծնունդ լս. Ամպամած եղանակ։ | |
| 16 | ✠ Կիր. է. Զ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Հարսանիք։ | 2 |
| 17 | Բշ. ը. Ս. Ղուկիանոսի հարիւրապետին որ հաւատաց 'ի Խաչելութիւնն Քրիստոսի և Յովսէփայ Աստուածահօրն, Յովսէփայ Արիմաթացւոյն, բարեկամին Քրիստոսի Ղազարու և քերցն նորա Մարթայի և Մարիամու։ | 3 |
| 18 | Գշ. թ. Ս. Թէոդիտոնի քահանային, Զենոնի զինուորին, Մակարա, Եւդոքսեայ և Ռոմիլեայ։ | 4 |
| 19 | Դշ. ժ. Պահք։ | 5 |
| 20 | Եշ. ժա. Ս. Խարիթեանց և Ս. վկայիցն Արտեմեայ և Քրիստափորի և երկուց կանանցն Կալինիկեայ և Ակուլինեայ։ | 6 |
| 21 | Ուր. ժբ. Պահք։ | 7 |
| 22 | Շբ. ժգ. Ս. Երկոտասանից վարդապետացն Ոսեթէոսի, Դիոնեսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղեմացւոյն, | 8 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|
| | Եփրեմի Խորին Ասորւոյ, Բարսեղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղի Աղեքսանդրացւոյն։ | |
| | Ռուսաց՝ Տօն Ղազանու Ս. Աստուածածնայ պատկերին։ | |
| | ◑ Առ. քառ. լուսնի. Խոնաւ եղ. | |
| 23 | ✠ Կիր. ժդ. Է. Կիր. զկնի Ս. Խաչի։ Գիւտ—Խաչ։ Հարսանիք։ | 9 |
| 24 | Բշ. ժե. Ս. Անաստասայ քահ. Վարոսի և Թէոդորիտեայ և որդւոց նորա և որք ընդ նմա կատարեցան։ | 10 |
| 25 | Գշ. ժզ. Ս. Հիպերեքեանցն, որք ի Սամոսատ կատարեցան։ | 11 |
| 26 | Դշ. ժէ. Պահք։ | 12 |
| 27 | Եշ. ժը. Ս. Սեւեռիանոսի Սեբաստացւոյն, Բարելայ ծերոյն և 84 աշակերտացն նորին։ | 13 |
| 28 | Ուր. ժթ. Պահք։ | 14 |
| 29 | Շբ. ի. Ս. Յովհաննու Ոսկեբերան հայրապետին։ | 15 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|
| 30 | ✱ Կիր. ՖՅ. Ը. Կիր զկնի Ս. Խաչի. Հարսանիք: ☾ Լր. լս. Փափախյան։ | 16 |
| 31 | Բշ. Հ. Ս. Ստեփաննոսի Հաւլման, հայրապետին և քահանայից, սարկաւագաց և ժողովրդոց։ | 17 |

---

Այս ամսուայ 1 ից մինչև 31-ն օրը պակասել է 2 ժ. 14 րոպէ։

---

ՀՈԿՏԵՄԲԵՐ։—Կարիճ։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համարձակ է և խորամանկ, բայց իր պակասութիւնները ծածկելով՝ իր արտաքին գեղեցկութեամբ խաբում է և շատերի աչքը շլացնում։ Օրիորդներ այսպիսի կեղծաւորներին երբէք չհաւատաք. դրանք միայն երեսանց են ուրախ երեւում, այդպիսիների ծիծաղը վնասակար է, աղէտաբեր և առանձնութեան ժամանակ դրանք մելամաղձութեամբ են տանջւում։

Իսկ ծնուած աղջիկը՝ աշխոյժով լի, առատաց, ծածկամիտ, կեղծաւոր, դաւաճան, փոփոխամիտ և ագահ, սիրում է ծաղրել և ուրիշների մասին վատ կարծիք յայտնել։ Եւ չնայելով իւր քաղցրանկատութեան ու բարեհաճոյ ձևերին՝ սիրտը բարութեամբ չէ համակուած։

Հոկտեմբերին ծնուածներն առհասարակ իրենց գործերում յաջողութիւն են գտնում և հարստութիւն են ձեռք բերում։ 40 տարեկան հասակումն է, որ թէ իրենց բնաւորութիւնն է փոխւում դէպի լաւը և թէ իրենց գործերի մէջ փոփոխութիւն է լինում։ Միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են։

---

Օ Լ

# ՆՈՅԵՄԲԵՐ

## 30 ՕՐ

Նոյեմբեր ամս. անունը ծագում է լատին. Novembre բառից, որ նշանակում է իններորդ։ Հռովմայեցիք այս ամիսը անուանել են իններորդ նրա համար, որ շատ առաջ նրանք նոր տարին ոչ թէ Յունուարից էին հաշվում ինչպէս հիմայ, այլ Մարտ ամսից։ Մեր նախնիք այս ամիսը անուանել են Տրէ։ Իսկ Վրաստանում, որովհետև այս ամսուայ 10-ին տօնվում է Ս. Գէորգայ տօնը, սորա համար էլ, այս ամիսը անուանել են Գիօրգ—օբայ, կամ Գէօրգոբիս-թվէ, որ նշանակում է Գէորգայ-տօնի ամիս։

1 Գշ. փյ. Ս. Ակիփսիմեայ եպսկ. Յովսէփայ քահ. Այիթալայ սարկաւագին և Պղատոնի վկային։ 18

2 Դշ. փյ. Պահք։ 19



3 Եշ. թյ. Ս. Հայրապետացն Մետրոփանոսի, Աղէքսանդրոսի, Պօղոսի խոստովանողին և Ս. Նոտարացն Մարկիանոսի և Մարտիրոնի։ 20

4 Ուր. թյ. Պահք։ Յերեկ. նախատ. 21

5 Շբ. բյ. Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրացն։ 22

6 ✠ Կիր. բյ. Թ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Հարսանիք։ 23

Վր. քռ. լս. Հոգմոխտոն։

7 Բշ. գյ. Ս. Մելիտոսի Անտիոքայ հայրապետին և Մինասայ եգիպտացւոյն և միւս Մելիտոսի եպ. Բուրայ քահանային և Շինու սարկաւագին։ 24

8 Գշ. գյ. Ս. Դիմիտրեայ վկային և Բասիլիկոսի քահանային։ 25

Լ.. տ Ընծայումն Ս. Աստուածած.

9 Դշ. դյ. Պահք։ 26

10 Եշ. դյ. Ս. Գուրիասայ, Սամոնասայ, Աբիբայ սարկաւագին, 27

Ռամանոսի միայնակեցւոյն, մանկանն խոստովանողի և Հիւսիքոսի զինաւորին։
☼ Արեգ. ՚ի Աղեղնաւորն։
11 Ուր. ոյ. Պահք։ 28
12 Շբ. ոլ. Ս. Առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի։ 29
13 ✠ Կիր բյ. Ժ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Հարսանիք։ 30
☾ Ծնունդն լս. Աշնանային եղ.
14 Բշ. բէ. Ս. Անդրէի զօրավարին և բանակի նորին, Կալինիկոսի և Դոմետեայ վկայիցն։ 1
15 Գշ. գյ. Ս. Անդրիանոսի և կնոջն նորա Անատօլայ, Թէոդորոսի և Եւթիւքոսի վկայիցն։ 2
16 Դշ. գէ. Պահք։ 3
17 Եշ. դյ. Ս. Աբրահամու և Խորենայ անարծաթ բժշկացն, Կոզմայի, Դամիանոսի և Աստուածատրոյ վկային։ 4
18 Ուր. դէ. Պահք։ 5
19 Շբ. եյ. Տօն ամենայն Սրբոց— 6



Հնոց և Նորոց, Յայտնից և Անյայտից։
20 ✠ Կիր. ոէ. ԺԱ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Յիսնակի պահոց։ Յերեկ. նախատօնակ։ 7
21 ✠ Բշ. բյ. 1. օր Յիսնակի պահոց։ ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ի Տաճարն.—Եւս Յ. և Ռուսաց։ 8
☽ Առ. քռ. լս. Թեքոտ եղ.
22 Գշ. բէ. 2. օր Յիսնակի պահոց։ 9
23 Դշ. գյ. 3. օր Յիսնակի պահոց։ 10
24 Եշ. գէ. 4. օր Յիսնակի պահոց։ 11
25 Ուր. դյ. 5. օր Յիսնակի պահոց։ 12
26 Շբ. դէ. Ս. Գրիգորի Սքանչելագործի, Նիկողայոսի Հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին։ 13
27 ✠ Կիր. ոյ. Ա. Կիր. Յիսնակի։ Հարսանիք։ 14
28 Բշ. ոէ. Ս. Կուսանացն Յուլիանեայ և Վասիլոհւոյ։ 15
29 Գշ. բյ. Ս. Ղուկիանոսի քահանային և Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ և այ- 16

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|

լոց աշակերտացն Քրիստոսի։
☉ Լրումն լս. Անդրէասեան Եղ.
30 Դշ. Եւ. Պահք։ 17

—

Այս ամսուայ 1-ից մինչև 30-ն օրն պակասել է 1 ժ. 4 րոպէ։

---

ՆՈՅԵՄԲԵՐ.—Աղեղնաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան քաջ է և արի, խելօք, բարեկամներ շատ գտնող, առողջակազմ, ճշմարտասէր, հաստատամիտ, վարուող, աշխատասէր, իրնէ բարեպաշտ, սրտով ուրախ, բարի և իւր ունեցած լաւ յատկութիւնների համեմատ՝ անչափ ինքնասէր։

Իսկ ծնուած աղջիկը՝ գործունեայ և աչալուրջ, աշխատասէր, բարեպաշտ, բարի և սրտով ուրախ։ Գլխաւոր պակասութիւնը իւր կասկածոտ բնաւորութիւնն է։

Նոյեմբերին ծնուածներն առհասարակ արդիւնաբերութեան մէջ բախտաւոր են լինում և միջին տարիքում կարողութեան տէր։ 33 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են և եթէ չափաւոր ու ժուժկալ կեանք վարեն մինչև խոր ծերութեան կը հասնեն։

---

Օ | Լ

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

31 ՕՐ

Դեկտեմբեր ամիսը վերցրած է լատինական decembre բառից, որ նշանակում է տասներորդ։ Այսպէս անուանեց ամիսները հիմնադիր Հռոմուլոսը տարուայ տասներորդ ամիսը։ Մեր նախնիք այս ամսին անուանել են Քաղոց։ Որովհետև Վրաստանում այս ամսի 25-ին կատարվում է Քրիստոսի Ծննդեան տօնը, այս պատճառաւ այս ամսին վրց. անուանել են Քրիստիշոբաս, կամ Քրիստիշոբիսթվէ, որ նշանակում է Քրիստոսի Ծննդեան ամիս։

1 Եշ. ֆԶ. Ս. Կղեմայ հայրապետին և Բագարատայ Տաւրմենայ եպիսկոպոսին։ 18

2 Ուր. ֆԷ. Պահք։ Յերեկ. նախատ. 19

3 ✝ Շբ. ֆԶ. Ս. Առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց ԹԱԴԷՈՍԻ և ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԻ։ 20

Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Է

4 ✠ Կիր. ՓԷ. Բ. Կիր. զկնի Յիսնակի։ Հարսանիք։ 21

5 Բշ. ՓԶ. Ս. Գենադիոսի եպիսկոպոսին և Մերկերիոսի զինուորին, Յակոբայ և Իրաւափառայ։ 22

6 Գշ. ՓԷ. Ս. ԱԲԳԱՐՈՒ Նախավկայ և անդրանիկ Թագաւորին մերոյ. 23

☾ Վերջին քա. լս. Անձրևոտ եղ.

7 Դշ. ԲԶ. Պահք։ 24

8 Եշ. ԲԷ. Ս. Հարցն Եգիպտացւոցն, Պօղոսի, Պօղոյ, Մակարայ Եւագրի, Յովհաննու Դբնեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սերիանու, Դանիէլի, Օրապիոնի, Մակարիոսի, Պեմենի և այլոց Ս. Հարցն։ Յերեկոյին նախատօնակ։ 25

9 ✠ Ուր. ՓԶ. Պահք։ ՏՕՆ ՅՂՈՒԹԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի ՅԱՆՆԱՅԷ։ 26

☼ Արեգակն 'ի յԱյծեղջերն։ Ձմեռնամուտ և արեւադարձ. ցերեկն սկսանի երկարել և գիշերն կարճանալ։

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

| Օ | | Ն |
|---|---|---|
| 10 | Շբ. փչ. Ս. Նիկողայոսի Զմիւռնացւոյ Սքանչելագործ հայրապետին: | 27 |
| 11 | ✠ Կիր. գչ. Գ. Կիր. զկնի Յիսնակի: Բարեկենդան Ս. Յակովբայ պահոց | 28 |
| 12 | Բշ. գչ. Պահք: Ս. Մինասայ, Երմոգինեայ և Գրաքոսի և կամաւոր աղքատացն Յովհաննու և Ալէքսիանոսի: | 29 |
| | Լատ. Ծնունդ Տեառն: | |
| 13 | Գշ. դչ. Պահք: Ս. Կոռնելիոսի հարիւրապետին և Շմաւոնի ազգականին Քրիստոսի, որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պողիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ և Ս. վկայիցն, որք յԱրեւելս կատար. | 30 |
| | ● Նն. լս. [illegible] | |
| 14 | Դշ. ոչ. Պահք: | 1 |
| 15 | Եշ. բչ. Պահք: Ս. Եւստրատիոսի, Օգսենտիոսի, Եւգենիոսի, Ովրեստէսի և Մարգարիտոսի: | 2 |
| 16 | Ուր. բչ. Պահք: Յերեկոյին Նախատօնակ: | 3 |

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

| Օ | | Ն |
|---|---|---|
| 17 | Շբ. գչ. Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի Ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին: | 4 |
| 18 | ✠ Կիր. գչ. Դ. Կիր. զկնի Յիսնակի: | 5 |
| 19 | Բշ. դչ. Ս. Հայրապետացն Իգնատիոսի, Ադդէի և Մարութայ եպիսկոպոսին: | 6 |
| 20 | Գշ. դչ. Ս. Թէոպոմպայ եպիսկոպոսին, Թէոնեայ վկ. և չորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիգի և Բասիլիկեայ: | 7 |
| 21 | Դշ. ոչ. Պահք: | 8 |
| | ◑ Առ. քռ. լս. [illegible] | |
| 22 | Եշ. ոչ. Ս. կուսանացն Ինդոսի, Դոմինի և Գղերիկոսի քահանային և երկուց բիւրոցն, որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց: | 9 |
| 23 | Ուր. բչ. Պահք: Յերեկոյին Նախատօնակ: | 10 |
| 24 | Շբ. բչ. Ս. Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն: | 11 |
| | Յ. և Ի. Ճրագալոյց Ծննդեան: | |

| 0 | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|
| 25 | ✠ Կիր. գյ. Ե. Կիր. զկնի Յիսնակի: Հարսանիք: Յերեկ. Նախատօնակ: Լ. և Ռուսաց՝ Ծնունդ Տեառն և ուտիք է նոցա մինչև 'ի չորսն Յունուարի: | 12 |
| 26 | Բշ. գկ. Ս. Ստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին: Հանդիսաւոր օր ուխտի Ս. Ստեփաննոս եկեղ. Տփխիսայ՝ որ 'ի յանապատին կուսանաց, ուր և ամփոփի մաս նշխարաց — աջ Ս. Ստեփաննոսի: Յերեկ. Նախատ. | 13 |
| 27 | Գշ. գդ. Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի: | 14 |
| 28 | Դշ. գե. Պահք: Յերեկ. Նախատ. ☉ Լր. լս. Փոփոխական եղ. | 15 |
| 29 | Եշ. ոդ. Ս. որդւոցն Որոտման Յակոբայ առաքելոյն և Յովհաննու Աւետարանչին: Բարեկենդան՝ Ծննդեան պահոց: | 16 |
| 30 | Ուր. ոե. 1. օր Ծննդ. պահոց: | 17 |
| 31 | Շբ. բյ. 2. օր Ծննդ. պահոց: Ս. Բարսեղի հայրապետին և եղ- | 18 |

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

բօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետին և Աբբայ Եփրեմի Խորին Ասորւոյ:

—

Այս ամսուս 1 էն մինչև 31-ը օրը պակասել է 0 ժ. 37 ր.

---

ԴԵԿՏԵՄԲԵՐ.—Այծեղջիւրն: Այս համաստեղութեան տակ ծնուած տղան թէև այնքան բախտաւոր չի լինիլ և ձախորդութիւնները շատ կ'քաշէ, բայց ճշմարտասէր, թեթևամիտ, եռանդոտ, չար, ագահ և անբարիշտ կլինի: Իւր մասին մեծ համարում ունի. թէև համեստ է երևում, սակայն դա միայն արտաքին կողմից է և կեղծ, որովհետև իւր ամեն բաւականութեանց ախրահար է:

Իսկ ծնուած աղջիկը՝ արթուն, թեթևամիտ, ջահել ժամանակը վերին աստիճանի ամօթխած, սակայն վերջը համարձակ և շատ խառնակիչ. պսակուած ժամա-

Նաև ես խանդոտ՝ թէև այս պակասութիւնները միշտ աշխատում է ծածկել։ Եթէ չափաւոր և զգոյշ լինի մինչև խորին ծերութեանը կհասնի։

Դեկտեմբերին ծնուածներն, առհասարակ իրենց գործերում խելօք են և խորհուրդների մէջ զգոյշ. սիրում են գիտութիւններ և միշտ հակուած են դէպի ճանապարհորդութիւն։ Առևտրից օգտուող, իսկ շինութիւններից վնասուող։ Պէտք է միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանան։

### ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Եթէ երբեմն եղանակի գուշակութիւնները ճիշտ չեն կատարվում, այդ պատահում է երկրի աշխարհագրական դիրքից և օդերևոյթաբանական զանազան պատճառներից, նամանաւանդ, պարբերաբար բոլոր ուղղութեամբ փչող հողմերի, ցիկլոնների և մթնոլորտի յեղաշրջման (пертурбацiя) ժամանակ. Ծ. Աշխ.



ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԹՈՒՆԵԱՆ

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## Մ. ՋՄՇԿԵԱՆԻ «ԾՈՑԻ-ՕՐԱՑՈՅՑԻ»

## I. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

### 1) ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ *Հայրապետ և Կաթողիկոս ամենայն հայոց* Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. *Ծնեալ* 1820 *ապր.* 4-*ին. ընտրեալ մայիսի* 5-*ին* 1892 *թ. և օծեալ սեպտեմբերի* 26-*ին* 1893 *թ.։*

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ— Տ. Տ. *Սահակ կաթողիկոս։*

ԱՂԹԱՄԱՐԱՅ—*(թափուր)։*

### 2) ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ — *Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեան։*

Կ. ՊՈԼՍՈՅ—*Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան։*



### 3) Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՀՈԴ

*Նախագահ Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեան։*
« *Յովհաննէս եպ. Շիրակունի։*
» *Աշոտ վրդ. Շախեան։*
» *Մատթէոս վրդ. Մատթէոսեան*
» *Բարգէն վրդ. Աղաւելեանց։*
« *Յուսիկ վրդ. Զոհրաբեան։*
*Պրոկուրոր* Լ. Ա. *Ֆրէնկէլ։*

### 4) ԹԵՄԵՐ ԵՒ ԹԵՄԱԿԱԼՆԵՐ

*ա)* ԵՐԵՒԱՆԻ.—*Փոխանորդ թեմակալ առաջնորդի. Կարապետ վարդապետ։*

*Տաթևի յաջորդ՝ Ներսէս վարդապ.*

*Հին-Նախիջևանի յաջորդ.—Իսահակ վրդ. Տէր-Միքայէլեան։*

*Ղարսի յաջորդ.—Կիւրեղ վրդ.*

*Աղէքսանդրապոլի յաջորդ — Սահակ վրդ. Բաղդասարեան։*

*բ)* ՎՐԱՍՏԱՆԻ *և* ԻՄԵՐԷԹԻ.—ԹԵՄ

առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սաթունեան։

Գանձակի յաջորդ.—(Թափուր)։

Ախալցխայի յաջորդ.—(Թափուր)։

Գորու յաջորդ.—(Թափուր)։

գ) ՂԱՐԱԲԱՂԻ.—Առաջնորդ Թեմի Գրիգոր եպ. Գառնակերեանց։

Նուխու յաջորդ.—Սիոն վրդ. Տ. Մանուէլեան։

դ) ՀԱՇՏԱՐԽԱՆԻ.—Թեմական առաջ. Արիստակէս արքեպիսկ. Սեդրակեան։

ե) ՇԱՄԱԽՈՒ.—Առաջնորդ Թեմի Անանիա եպ. Համազասպեան։

զ) ԲԵՍԱՐԱԲԻՈՅ.—Առաջնորդ Թեմի Ներսէս արքեպիսկ. Խուդավերդեանց։

է) ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ.—(Թափուր)։

ը) ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ. Սահակ եպիսկոպոս Այվազեան։



թ) ԵՒՐՈՊԱՅԻ.—Առաջնորդ Գէորգ եպիսկ. Իւթիւճեան.—Նստում է Մարսէլլ քաղաքում, որտեղ և հայոց մատուռ կայ—Ս. Յարութիւն։ Բացի դրանից առանձին հովիւներ կան՝ Փարիզում, Մանչեստրում և Սուչօվայում։

ժ). ԱՄԵՐԻԿԱՅԻ.—Առաջնորդ Յովսէփ եպ. Սարաճեան։—Նստում է Ուսթըր քաղաքում, որտեղ կայ հայոց եկեղեցի Ս. Փրկիչ։ Բացի առաջնորդից առանձին հովիւներ կան՝ Նիւ-Եօրկում, Բօստոնում, Պրօվիտէնսում, Լօրէնսում՝ Չիկագօյում և Ֆրեզնօյում։

—

ԹԻՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ.

ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿ. ՕՐՄԱՆԵԱՆ։

Պատրիարքական Փոխանորդ Գաբրիէլ եպ. Ճեվայիրճեան։

Կրօնական Ժողով

1 Մաղաքիա Արքեպ. Օրմանեան Նախագահ։

2. Գրիգորիս Արքեպ. Յովհաննիսեան։
3. Վահրամ Եպիսկ. Մանկունի։
4. Գաբրիէլ Եպ. Ճեվայիրճեան։
5. Եղիշէ Եպիսկ. Դուրեան։
6. Կարապետ Աւագ քհ. Սեթեան։
7. Յովհաննէս Աւագ քհ. Շահպազեան։
8. Գաբրիէլ Աւագ քհ. Խանճեան։
9. Կարապետ Աւագ. քհ. Սանթուլճեան։

## ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄԵՐԸ

1) ԷՏԻՐՆԷ.—Առաջն. տեղ. Արսէն քհ. Դերձակեան։

2) ԹԷՔԻՐԴԱՂ.—Առաջնորդ Ներսէս եպ. Աւանեան։

3) ԻԶՄԻԹ.—Առաջնորդ Ստեփաննոս եպ. Յովակիմեան։

4) ՊՐՈՒՍԱ.—Առաջ. Յովհաննէս եպ. Արշարունի։



5) ՊԱԼԸՔԷՍԻՐ-ՊԱՆՏՐՄԱ. — Տեղապահ Թաթուլ Ծ. Վ. Դուրեան։

6) ՊԻԼԷՃԻԿ.—Առաջնորդ Մովսէս եպ. Կէօմիւրքճեան։

7) ՔԵՕԹԱՀԵԱ.—Առաջ. տեղ. Մկրտիչ վարդ. Աղաւնունի։

8) ԻԶՄԻՐ.—(Թափուր)։

9) ԷՆԿԻՒՐԻԱ.—Առաջն. Եղիշէ Ծ. Վ. Գալֆայեան։

10) ՂԱՅՍԵՐԻ.—Առաջնորդ Տրդատ եպ. Պալեան։

11) ՍՎԱԶ.—Առաջնորդ Պետրոս արք. Թահմիզճեան։

12) ԹՈԽԱԹ.—Առաջ. Պետրոս արքեպ. Թահմիզեան։

13) ԱՄԱՍԻԱ-ՄԱՐԶՈՒԱՆ.—Առաջնորդ. Արիստակէս եպ. Վանքեան։

14, 15) ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ ԵՒ ԱՆ-ԳԸՏԵՐ.—Առաջ. Սմբատ Ծ. Վրդ. Սաատէթեան։

16) ՃԱՆԻԿ.—Առաջ. Յակոբ եպ. Աշոտ-Փափազեան։

17) ԹՐԱՊԻԶՈՆ.—Առաջ. Եղնիկ վրդ. Գարայեան։

18. 19. 20) ԷՐԶՐՈՒՄ—ԲԱՍԵՆ—ԴԵՐՋԱՆ.—Առաջ. Զաւէն ծ. վրդ. Տէր-Եղիայեան։

21) ԵՐԶՆԿԱ.—Առաջն. Դանիէլ ծ. վրդ. Յակոբեան։

22) ԲԱՅԲՈՒՐԴ.—Առաջ. տեղապ. Արիստակէս վրդ. Խաչատուրեան։

23) ՔՂԻ.—Առաջ. ընտրեալ.—Գնէլ վրդ. Գալէմքեարեան։

24) ՔԵՄԱԽ.—Առաջ. Դանիէլ ծ. վրդ. Յակոբեան։

25) ԲԱՅԱԶԷՏ-ԱԼԱՇԿԵՐՏ.—Առաջ. տեղ. Էմմանուէլ վրդ. Պալեան։

26) ՎԱՆ.—Առաջ. Սահակ եպ. Բագրեւանդեան։

27) ԼԻՄ-ԿՏՈՒՑ.—Վանահայր Լիմայ Սահակ եպ. Բագրեւանդեան։



28) ԲԻԹԼԻՍ.—Առաջ. ընտրեալ Եղնիկ ծ. վրդ. Գալփագճեան։

29) ՄՈՒՇ.—Ընդհ. վանահայր և Գաւառ. փոխանորդ Խոսրով ծ. վր. Պէհրիկեան։

30) ՍՂԵՐԴ.—Առաջ. Փառէն վրդ. Մելգոնեան։

31) ԴԻԱՐԲԵՔԻՐ.—Առաջ. Եղեկիէլ ծ. վրդ. Արշակունի։

32. 33. 34) ԲԱԼՈՒ-ԱՐՂՆԻ-ՉՆՔՈՒՇ.—Առաջ. ընտրեալ Աղան ծ. վրդ. Համամեան։

35) ԽԱՐԲԵՐԴ.—Պատ. փոխ. Եղնիկ ծ. վրդ. Գալբագճեան։

36) ԷԿԻՆ.—Առաջ. տեղապահ Գէորգ վրդ. Արսլանեան։

37) ԱՐԱԲԿԻՐ.—Առաջ. Մուշեղ ծ. վրդ. Սերոբեան։

38) ՉԱՐՍԱՆՃԱՔ-ՉՄՇԿԱԾԱՔ.—Առաջն. Կորիւն վրդ. Ելլիտրամեան։

39) ՈՒՐՖԱ.—Առաջ. Անանիա վրդ. Հազարապետեան։

40) ԲԱՂԴԱՏ.—Պատ. փոխ. (Թափուր)։

41) ԵԳԻՊՏՈՍ.—Առաջ. Յովսէփ եպիսկ. Այվազեան։

42) ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Այցելու հովիւ։ Կան 10 եկեղեցիներ և մի քանի քահանայ։

43) ՌՈՒՄԱՆԻԱ.— Աւագերէցներ իւրաքանչիւր եկեղեցւոյ։ Եկեղեցիք 16 և քահ. 7։

## ՄԱՍՆԱՒՈՐ ԹԵՄԵՐ

ա) ԱՐՄԱՇ՝ փոխ. վանահ. Եղիշէ եպ. Դուրեան։

բ) ԳԱՍՏԱՄՈՆԻ՝ Առաջ. փոխ. (Թափ.)։

գ) ՊԻԼԵԿԻՍ՝ վանահ. Սահակ. եպ. Սանթալճեան։

դ) ԿԻՆՃ՝ Առաջ. փոխ. Վարդան վրդ. Յակոբեան։



ե) ԱՂԲԱԿ՝ Առաջ. փոխ. Արսէն վրդ. Գէորգեան։

զ) ՍԱԼՕՆԻԿ՝ հոգ. հովիւ Մկրտիչ քհ. Չլղատեան։

է) ԿՐԵՏԷ՝ հոգ. հովիւ Աւետիս քհ. Ռափայէլեան։

---

Ս. Երուսաղէմի, Սսոյ և Աղթամարայ թեմերի մասին տեղեկութիւններն ուշ ստանալու պատճառով չկարողացանք հասցնել։ Ծան. Աշխ.

# II, ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

## ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ.

—

*1905 թ. երկու անգամ արևի և երկու անգամ լուսնի խաւարումներ տեղի կունենան, որոնցից.*

1) *Արևի (մանեկաւոր) խաւարումն* 21-*ին փետրվարի, սկիզբը* 5 *ժ.* 19 *ր. վերջը* 11 *ժ.* 4 *ր. առաւ.։*

2) *Արևի (լիակատար) խաւարումն* 17-*ին օգոստոսի, սկիզբը* 1 *ժ.* 27 *ր. վերջը* 6 *ր.* 37 *ր. առաւ.*

3) *Լուսնի (մասնաւոր) խաւարումն* 6-*ին փետր. սկիզբը* 8 *ժ.* 52 *ր. վերջը* 11 *ժ.* 5 *ր. երեկ.։*

4) *Լուսնի (մասնաւոր) խաւարումն* 2 *օգոստոսի* 5 *ժ.* 39 *ր. վերջը* 7 *ժ.* 42 *ր. առաւօտեան։*

*Այս խաւարումներից տեսանելի կը լինի Կովկասում միայն՝ փետր.* 8, *և օգոստ.* 2 *խաւարումները՝ այն էլ մասնաւոր։*



# III. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

## *Էֆիմէրտէի գուշակութիւնը.*

*Առաջիկայ* (1905 *թ.*) *տարին միջակ կը լինի և համարեայ ամբողջ տարի հարաւային հողմը կը փչի։*

*Ձմեռը՝ քամոտ կը լինի, գարունն՝ միջակ՝ թեթև անձրևներով։ Ամառն՝ բարեխառն, թեթև քամիներից պտուղները կը փչանան։ Աշնանը վավաշոտ կանայք կը հիւանդանան։*

*Ըստ Դէմոկրատէսի կարկտից վնաս կը հասնի և պէտք է աղաչել Աստուած որ մահտարաժամ եւ (ցաւ) չը երեւայ։*

*Այս տարի աւազակները կը բազմանան, և Երևակի տակ ծնուածները իրանց հաւատը կը կորցնեն։*

*Երկնքի եօթներորդ տանն Լուսնթագէ-Մուշթարույ հետ կցուած լինելովն գուշակվում է, որ սաստիկ կոխ է լի-*

նելու կոտորածներով և մահ մեծահամբաւ և հարուստ անձանց։

Լուսաբերի երկնքի եօթներորդ տանն գտնուելուն ևս նշան է, որ ինչպէս կանայք, այնպէս և իգաբարոյ անձինք ամէն բանում յաջողութիւն կունենան։

Իսկ այս տարի տանուտէրն Արիծն լինելով, գարունն՝ անոյշ, դաշտերը լի, պտուղները և գինին առատ. Ամառըն անձրևոտ։ Ձմեռն կարճ, թէև սաստիկ ցուրտ։

Շատ քաղաքներ քարուքանդ կը լինին հեծելազօրներից։ Յունաստանի կողմերից դուրս եկած զօրքը ևս, շատ գաւառներ ոտի տակ կը տայ։ Բաբելոնի կողմերը ազգերի մէջ շարժում և Ասորեստան տրտմութիւն։



# IV. ԻՄԱՍՏՆԵՐ

Իմաստութեան սկիզբը լռութիւնն է։

—Մեր կորստեան անդունդը մեր սրտումն է։

—Անվերջ վշտերի փարատողը մահն է։

—Ժամանակից տխրողը փոքն է։

—Մարդս կեանքի մէջ կամ իւր խըղճի ստրուկն է լինելու (բարի), կամ բռնակալը (չար)։

—Աշխատի՛ր, որ կշտանաս, աղօթի՛ր որ փրկուես, համբերի՛ր եթէ ուզում ես որ օգնեն։

—Սանձիր լեզուդ եթէ ուզում ես աշխարհումս ապրել։

—Մարդիք ոչ այնքան մարմնով են աճ՝ որքան հոգով։

—Քնիր առանց ընթրիքի, վերկաց առանց պարտքի։

—Բամբասանքը ոչ այլ ինչ է, այլ

թէ նախաճաշի արդիւնք և զէնք։

—Մենք այնքան անբաղդ չենք լինում, որքան—ինչպէս երևակայում ենք։

—Ինքդ քեզանից աւելի վախեցիր քան թշնամուցդ։

—Համբերութիւնն ու աշխատանքն հրաշքներ են գործում։

—Եթէ գործ ես սկսում, ուրիշի վրայ յոյս մի դնիր։

—Ով տանջուել չգիտէ, նա ապրել չգիտէ։

—Աշխատանքը կեանքի հոգին է։

## ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Ամենասիրելին և ամենաթանկագինը մայրն է։

—Ջահել կինը կարիչներին էլ կծերացնէ, իսկ հին գինին նոյն իսկ ծերուկին էլ կջահելացնէ։



—Կնոջ սիրտը տարուայ եղանակների նման փոփոխական է։

—Կանայք հենց նրանց են պաշտում, որոնց չեն ճանաչում։

—Կանայք և դեղերն են քայքայում մարդուս գրպանը։

—Յաճախակի համբուրողը կարող է նաև կծել։

—Կնոջ սիրտը սիրոյ ծով է, որի մէջ շատերն են խեղդւում։

—Սէրը կրակ է, որից կարող է հրդեհ ծագել։

—Սիրոյ իսկական հիմքը՝ բախտաւորութիւնն է։

—Մարդ ամուսնանալու առաջին օրն և եթ պէտք է իր կեանքն ապահովագնէ, որովհետև կինը հենց ամբողջովին այրուող և բռնկուող նիւթերից է։

—Կանանց մեծ մասը հէնց նրանց

են սիրում, որոնք իրանց (կանանց) տանջում են։

Երկու կանանցից այն ընտրեցէք, ով վատ է հագնուած։

—Տղամարդի բնաւորութիւնը հեշտութեամբ կարելի է իմանալ նրա դի ձևից, իսկ կնոջը՝ համբոյրից։

—Կնոջ տղամարդութիւնը նրա կանացիութեան մէջ է։

---



# V. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

## ՄԱՐԴՈՒ ՀՈՏԸ

Յայտնի է մի քանի կենդանիներ, մանաւանդ շները գտնում են իրանց յայտնի մարդկանց հետքերը, առանց նրանց տեսնելու և կամ ձայնը լսելու։ Սրանով բնախօսները հասել են այն եզրակացութեան, որ ամեն անհատ ունի իւր սեփական հոտը։ Բժիշկ Բերը յայտնում է իւր մէկ բարեկամի մասին, որը ընդունակութիւն է ունեցել ճանաչել իւր ծանօթներին նրանց հոտից մի քանի քայլ հեռաւորութեան վերայ։ Խփած աչքերով նրան միշտ յաջողւում էր անուանել իւր ծանօթներին, հենց որ նրանք զանգահարում էին կամ ներս մտնում ընդունարանը։ Բժիշկ Բերը հաստատում է որ միևնոյն

հոտը ունենում է ամբողջ ընտանիքը միայն զանազան աստիճանի, այնպէս որ մշտական յարաբերութիւն ունեցողը, միենոյն ժամանակ լաւ հաստատութեամբ կարող է ճանաչել նրանց մի քանի քայլ հեռաւորութեան վրայ։

---



# VI. ԿԵՆՑԱՂԱՎԱՐԱԿԱՆ.

## Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ԸՆԵՆՔ ՄԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ *)։

Ամերիկական թերթ մը որ իւր բաժանորդներու միջև մրցման կդնէ հետևեալ նիւթը «Ինչ պէտք է ընենք մեր աղջիկները»։ Բազմաթիւ մրցողներու մէջէն ստորև դրուած պատասխանը կստանայ մրցանակը։

Ի՞նչ պիտի ընենք մեր աղջիկները։

Նախ քաջառողջ և ուժով քրիստոնեայներ, յետոյ տուէք անոնց լաւ դաստիարակութիւն մը։ Սորվեցուցէք անոնց աղէկ կերակուր պատրաստելը, ճերմակեղէն լուալը, արդուկելը, գուլ-

*) Այս յօդուածը հաճոյքով քաղում ենք «Գութան» հանդիսից և նոյնութեամբ զետեղում այստեղ մեր ընթերցողների հետաքրքրութեան համար։ Ծան. Աշխ.

պաներ կարկտելը, կոճակներ կարելը, շապիկ շինելը և իրենց բոլոր զգեստները ձեւելը։

Թող գիտնան տան հաց եփելը և չիշեն թէ՝ լաւ ու մաքուր խոհարարութիւնը բժշկի ու դեղարանի ծախքերը կպակսեցնէ։ Ըսէք իրենց թէ հինգ ֆրանքնոցը հարիւր սու կարժէ և խնայողութիւն ընելու համար պէտք է պակաս ծախսել, թէ՝ եկամուտէն աւելի ծախսողն անպայման պէտք է սպասէ թշուառութեան։

Հասկցուցէք իրենց թէ՝ վճարուած բամպակէ զգեստ մը աւելի կը սազէ, քան պարտքով գնուած մետաքսէ շրջազգեստը։

Թող կանուխէն՝ պզտիկուց գնել և իրենց ծախսելու հաշիւները բռնելը գիտնան։

Կրկնեցէք իրենց միշտ թէ թեւերը



բաց և գոգնոցաւոր համեստ գործաւոր մը, նոյն իսկ եթէ փարա մ'ալ չունենայ, հարիւր անգամ աւելի յարգելի է քան տասնեակ երիտասարդ շքեղազգեստ, սնապարծ և պակասամիտները, որոնք գրեթէ միշտ ապականուածներ են իրենց ներքին փտութիւնը կը ծածկեն արտաքին վայելչութիւններու ներքեւ։

Սորվեցուցէք իրենց պարտէզի մշակութիւնը և ծաղիկները սիրելը։

Ասկէց ետքը, եթէ միջոցնիդ կը ներէ, դաշնակի և գծագրութեան դասեր ալ տուէք. գիտցէք որ այս արուեստները բոլորովին երկրորդական են կեանքի մէջ և զայն երջանկացնելու համար շատ քիչ տեղ կը բռնեն։

Մանաւանդ թող սորվին արհամարհել սնոտի երեւոյթները, իրենց այոն այո, և ոչը ոչ։

Երբ իրենց ամուսնութեան ժամանակը գայ, համոզեցէք զիրենք, որ երջանկութիւնը կախում ունի ամուսնուն բարոյական նկարագրէն և լաւ յատկութիւններէն՝ թէ չէ անոր հարըստութենէն կամ փայլուն դիրքէն։

Եթէ այս բոլորը դուք կշռեցիք և անոնք ձեր խօսքերը հասկցան, վստահ եղէք որ ձեր աղջիկները երջանիկ պիտի ըլլան և իրենց ճամբան պիտի գտնեն։

---



# VII. ԲԺՇԿԱԿԱՆ

## ԽՈԼԵՐԱՅԻ ՆՇԱՆՆԵՐ։

Ամենից առաջ շուտ-շուտ և առատութեամբ լուծում է մոխրագոյն, իսկ վերջը բոլորովին անգոյն բրնձի ապուրի նման հեղանիւթ (շատ անգամ մի ժամուայ մէջ 10—15 անգամ), փորի մէջ առանց ցաւի համարեայ ղալարում և գրգռոցզգում։ Զրուեթը պակասում է, ամեն 2—3 ժամը մի անգամ, իսկ 2—3 անգամ լուծելուց յետոյ էլ փսխում է կերակրի մնացորդները, յետոյ կտրած կաթի նման հեղանիւթ. այսպէս շարունակւում է ամեն 10—15 րոպէից յետոյ, սկզբումը լինում է հեշտ և գնալով աւելի դժուարութեամբ և չարչարանքով։ Դրան տխրութիւն և սրտի գդալի տակ ցաւ է գալիս։ Փորի լուծելուց և փսխելուց յայտնւում են կծկումները, որ խաղե-

րալի ամենավտանգաւոր նշաններիցն է, որը առաւելապէս ոտի կճնամսերում՝ շատ անգամ էլ ձեռքերում և ոտներում։ Մարմինը սառչում և կապտում է։ Հիւանդութեան սկզբումը տաքութիւն չէ լինում, այլ ընդհակառակը այս նշաններից յետոյ էլ տաքութեան աստիճանը ցածրանում էլ է, ծարաւութիւն է զգում, զգացողութիւնն էլ մինչև մահը պահպանւում է։ Այս նշանները մինչև 8—24 ժամ տեւում են. բայց պատահում է որ 2—3 օրից էլ առաջ մեռնում են, երբ զարկերակը սկսում է զօրեղանալ և գնալով արագանում է (մինչև 90—100 զարկ), արեան՝ գլուխը հոսելու նշաններ են երեւում, շատ անգամ և հարինքի—տիֆի նման էլ խլութիւն։ Առողջանալը 4—10 օր է տեւում։ Հաստատ դեղ սրա դէմ գտնուած չէ դեռ։ Շտապիր բժիշկ հասցնել։



# VIII. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

## ԽՈԼԵՐԱՅԻՑ ԱԶԱՏ ՊԱՀԵԼՈՒ ՀՆԱՐՔ։

Ահից և շուտափոյթ գաղթելուց չպիտի մարդ իր սովորական կեանքի եղանակը փոխի։ Ստամոքսը չպիտի ծանրաբեռնել դժուարամարս, չաղ, հում, շատ սառը, շատ ծարաւեցնող և առաւելապէս հին, փչացած, շատ աղարած կերակուրներով։ Այդպիսի կերակուրների գործածութիւնը աւելի գիշերներն է վնասակար, քան ցերեկները։

Երկար ժամանակ քաղցած մնալն ևս վնասակար է, ինչպէս և տնից առաւօտները դուրս գալը, այլ պիտի խմել տաք թէյ, սուրճ, թերխաշ ձու, եփած կամ խորոված մի կտոր միս, պիտի որոշեալ ժամերին ճաշել և ճաշը բաղկացած պիտի լինի, ինչպէս ասացինք

վերը, հեշտ մարսելու կերակուրներից։

Նրանք, որոնք բանջարեղէնի-կանաչեղէնի և պտուղների սովոր են և առողջ ստամոքս ունին, կարող են գործածել, բայց պիտի լաւ մաքրած, եփած, եռացրած ջրի մէջ անցկացրած, և շատ հասած, վնասած և փթած չպիտի լինի։

Այն ամեն բաները, որոնք փորլուծումն կարող են առաջացնել անպայման պիտի խոյս տալ և պատահած ժամանակ անմիջապէս բժշկի պիտի դիմել։ Հում և անեփ կաթն եւ վնաս է։ Ամեն կերակուրներ պիտի ճանճերից թաքցնել։ Ամանները եւ միշտ եռացրած ջրով լուանալ և ծարաւն երբէք հում ջրով չպիտի կոտրել, եթէ աղբիւրներ կամ շատ խորը փորած ջրհորներ չկան. այլ թէյ խմել կամ եփ տալ ջուրը, սառեցնել և մէ-



ջը կարմիր գինի, լիմոն կամ անանուխ խառնել։ Միանգամից սառը ջուր և սառն խմելիք չպիտի ընդունել։ Թունդ խմիչքները լաւ են, բայց դրանց չափազանց գործածութիւնն անչափ վնասակար է։ Մարմնի մաքրութիւնը անհրաժեշտ է, բայց շատ սառը բաղանիք չպիտի մտնել, ինչպէս և վնաս է վաղ առաւօտն կամ ուշ երեկոյեան, այն էլ անմաքուր տեղերում լողանալ։

—

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՈՐՀՈՒՐԴ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ։

Որքան կարելի է շուտ հիւանդների մօտից առողջներին հեռացնել։ Արտաթորելու և փսխելու համար ամաններ դնել, որոնց մէջը ածած լինի կարբոլեան թթւուտ կամ սնդկի աղով (сулема) ջուր։ Սպիտակեղէնները և ամեն

տեսակ շոր ու փալասեղէններ. որոնք գործածութեան մէջ են և հիւանդը նրանց դիպչում է, առաջուց պէտք է եռացնել ջրում և յետոյ լուանալ, մանճակալը, անկողինը և միւս իրեղէնները, որոնց հիւանդը գործ է ածում, ախտահանութեան կերպիւ, պէտք է մաքրել և լուանալ։ Վարակուելուց յետոյ էլ տան պատերը նորից պէտք է սուաղել և դեղ քսել, հին պաստառներն էլ պատառոտել, պոկել, այրել և նորերը կպցնել։ Հիւանդի սենեակում վատ հոտը մաքրելու համար, պէտք է զանազան ծխանելիքներ ծխել, այլ և պէտք է սենեակը քամու տալ (լուսամուտները և դռները բաց անելով) և այն ամեն իրերը, որոնք վատ հոտ են առաջացնում, հեռացնել, կերակուրն էլ չպէտք է պահել կամ



թողնել հիւանդի կացարանում։ Հիւանդին սպասաւորողները որպէս զի չվարակուեն, հիւանդի բնակարանում չպէտք է ոչ ուտեն, ոչ խմեն, իրանց գլուխը, մօրուքը և վերնազգեստը խոզանակով պէտք է մաքրեն, որը պէտք է թաց արած լինի կարբոլեան թթուտի ջրի հետ խառնած ջրով։ Վարակիչ ցաւից մեռածների դիակներն էլ պէտք է շտապել հեռացնել բնակարաններից։

---

# IX. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ.

## ՀԱՒՆՈՑԻ ՄԱԿԱԲՈՒԾՆԵՐՈՒ ՋՆՋՈՒՄԸ.

Մակաբուծները այսինքն շատ պըզտիկ և գրեթէ անտեսանելի որդերը հաւնոցներու մէջ կոտորածներ կը գործեն։ Այս թշնամին այնքան փոքրիկ և այնքան բազմաթիւ է, որ անոր դէմ կռուելը դժուար է, մինչդեռ ինքը նըշմարելի վնասներ կը գործէ։

Երբ հաւնոց մը վարակուի այս մակաբուծներով հաւերուն վրայ հարիւրաւոր որդեր կը գտնուին, որոնք ծծելով խեղճ կենդանիններու արիւնը բոլորովին կը նիհարցնեն զանոնք։

Պակաչնին և երեսնին կը տժգունին, կենդանին հալմաշ կըլլայ և շատ չանցած կը մեռնի եթէ ժամանակին այս թշնամիի առաջքը չառնուի։

Թխսող հաւերը բնաւ չեն կրնար դի-



մադրել մակաբուծներուն, որովհետև իրենց անմաքրութիւնը պատճառ կըլլայ որ թշնամին իր վրայ բեղուն հող գտնելով բազմապատկի։

Թուխս դրուած հաւ մը թխսերու դրուած պահուն եթէ քանի մը օջիլ միայն ունենայ իր վրայ, անոնցմէ միլիոնաւորներ կը ծնին շատ չանցած։

Ինչպէս առջի նոյնպէս այս պարագային արմատովին և անմիջական կերպով ջնջելու համար չարիքը, պէտք է ընել ծծմբային թթուի (Acide Sulfureux) բաղնիք։

Առաջինը կը կայանայ հաւերը թաթխել պոչէն սկսելով մինչև փետուրներու վերջացած տեղը, ծծմբաւոր պոտասի (Sulfure de Potassium) բաղնիքի մը մէջ, այսպէս կենդանին մինչև գլխուն ներքևի մասը կը թաթխուի բաղնիքին մէջ, ձեռքով ալ օգնելով

որպէս զի դեղը թափանցէ մինչև մարմինը։ Այս գործողութենէն ետքը կը չորցուի քուրջով մը հաւը և թող կը տրուի արևը։

Այս միջոցը շատ արագ է և կը յանձնարարուի գեղեցիկ եղանակին, որովհետև իւրաքանչիւր հաւը 2-3 վայրկեանէն կազատի թշնամիէն։

Ձմեռ եղանակին և թխսող հաւերու վրայ եթէ պէտք ըլլայ կատարել գործողութիւնը նախամեծար պէտք է համարել ծծմբի ծխով կամ—(Ասիտ Սիւլֆիւրէօ)-ով դարմանումը։

Հաւը կը դրուի տուփի մը մէջ, գլուխը դուրս թողլով ծակէ մը և անոր ներքևը կայրուի ծծումբը։

7—8 վայրկեանէն ամենէն ոջլոտ կենդանիին գլուխը դուրսը գտնուելով, բնական է չի խեղդուիր։

Acide Sulfureux-ն փետուրներուն



տակը մտնելով մուխն կը հանէ և վայրկենաբար կոչնչացնէ մակաբուծերը, միևնոյն ժամանակ կը բժշկէ մորթի հիւանդութիւնները մանաւանդ թաթիկներու մէկ հիւանդութիւնը, որուն կըսեն հաւերու քոս։ «Գութան»

---

# X. ՏԱՆՏԻԿԻՆ

## ԽՆՁՈՐՆԵՐԸ ՊԱՀԵԼ.

Ձմեռն և ամառն ևս մինչև մէկ մար պահելու համար խնձորը պէտք է ընտրել ամենէն լաւը և չվիրաւորուած պտուղները, դնել սենեակի մէջ ուռիով հիւսուած տափակ կողովներու վրայ այնպէս որ իրար չը դիպչին։

Անմիջապէս փակել դռները, պատուհանները, որթատունկի ոստերով կրակ վառել մինչև որ սենեակը ամբողջովին լեցուի ծխով. չորս հինգ օր շարունակ կրկնել կրակ վառելը։

Վեցերրորդ օրը մէկ մէկ վեր առնել պտուղները և դնել սնտուկի մէջ ցորենի մրեղով (փոքր չորդ) ուշադրութիւն ընելով, որ խնձորները իրար չը դիպչեն, կարգ կարգի վրայ շարելով և միջոցները մրեղով բաժնելով լեցնելու է սնտուկը ամբողջովին պտուղով և այնպէս փակելու է կափարիչը։



# XI. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ

## ԱՊՐՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Կը հաշուեն, որ երկրագնդի վրայ 400,000 տեսակ կենդանիներ կապրին. միայն միջատները 280,000 տեսակ են, որոնց 120,000-ը պատենաթևաւորներ (coliopteres) են, 38,000-ն ալ թաղաթաթևաւորներ։

Ձկներու տեսակներուն թիւը կը հասնի 12,000-ի. սողուններինը 8,000-ի, որոնց 1,600-ը օձեր են և 300-ը թունաւոր։

Թռչուններու թիւը 13,000-ի մօտ է։

Մինչև այսօր գտնուած են 1300 տեսակ երկակենցաղներ, 20,000 տեսակ սարդոստէնի, 50,000 տեսակ թուլամորթներ, 300 տեսակ սալրամորթեր, 3,000 տեսակ որդեր։

Բէրլինի Բնապատմական միւզէն, որու հաւաքածուն շատ կարևոր է, ունի 200,000 տեսակ կենդանիներ և 1,800,000 կենդանիի օրինակներ։

# XII. ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

## ԾԱՌԵՐՈՒ ԽՄԱԾ ՋՈՒՐԸ

Ծառերը շատ մեծ քանակութիւնով ջուր են խմում, ըստ գերմանացի բնապատում Հօկնէլի սպասումներն այնքան ջուր, որքան իրանց տրամագրութեան տակ գրուի։

Գ.-Դը—Բէլլիս հաստատած է, որ ծառերը չոր տարիներէ աւելի անձրևոտ և խոնաւ տարիներուն աւելի մեծ քանակութեամբ ջուր են ծծում։

Եղևնիի (շամ աղաճը) 100 կրամ տերևը 10 կրամ ջուր կսպառէ, հացի (fren-տիշ պուտաքի)-ի 100 կրամ տերևը 85 կրամ ջուր։

Այս հաստատութիւններէն կհանուի հետաքրքիր հետևողութիւն մը թէ՝ անտառները բնութեան մէջ այն կարևոր



դերը կկատարեն ինչ որ կանոնաւորիչները մեքենաներու վրայ։

Մէկ հեկտար, այսինքն 10,000 մէթր քառակուսի տարածութիւն ունեցող հողերու վրայ տնկած 100 տարեկան անտառ մը, օրական 25—30,000 քիլօ ջուր կծծէ, որ ըսել է օրական երեք կամ ամսական տասը տասնորդամեթր բարձրութեամբ անձրև։ «Գութան»։

## XIII. ՀԵՏԱՔՐՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի գիտնականի հաշուով ամբողջ երկրագնդի վերայ ներկայումս կայ 9 միլիօն էշ և ջորի, 32 միլիօն այծ, 67 միլիօն ձի, 104 միլիօն խոզ, 312 միլիօն կով և եզ, 511 միլիօն ոչխար, ընդհանուր բոլորը 1,035 միլիօն գլուխ։

—

Գոլինեզիայում գտել են մի թռչունի կմախք, որի բարձրութիւնը ոտքից մինչև գլուխ 20 ֆուտ է։

—

Ամերիկացիները ունեն մի թնդանօթ, որ 7200 փութ է կշռում, երկարութիւնը 7 սաժէն է, ամեն մի գնդակի ծանրութիւնը 60 փութ է, որը 25 վերստ տեղ է թռչում։



## XIV. ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ինչպէ՞ս էք մտադիր անելու, պարտքը միանգամից պիտի տաք, թէ մաս առ մաս։

—Ես լաւ եմ համարում միանգամից վճարել։

—

Դատաւորը.—Ակա՛յ, կարելի չէ պաշտպան փաստաբանին աչքով անքով անել։

Ակայ կինը.—Մեղադրեալի օգտին եմ անում այդ. հօ չէ՞ք ուզում, որ ձեզ էլ անեմ։

—

Պարոն ուսանող, կարելի չէ՞ ինձ մի գործ տաք։

—Ի՞նչ գործ։

—Օրինակ ձեր տեղակ շարադրութիւն գրել կամ քննութիւն տալ։

—

Պսակից առաջ հայրը հարցրեց աղջըկան։

— Ինչո՞ւ չես լաց լինում, ինչպես սովորությունն է։

— Նա՛ պետք է լաց լինի, որին ես կին պետք է լինիմ, պատասխանեց աղջիկը։

—

Կրօնի դասին քահանան հարցրեց աշակերտին։

— Ո՞րտեղ է քո հայրը։

— Մարաքումը, պատասխանեց աշակերտը։

# XV. ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

## ա) ԳՆԵՐԸ (արժանացրած)

| | II դ. | III դ. |
|---|---|---|
| Թիֆ. ուղ. Մոսկուա | 24—40 | 15 ր. |
| » » Ս. Պետերբ. | 27 ր. » | 18 » |
| » » Վարշաւ | 26 » » | 18 » |
| » » Պոդվոլոչինսկ | 25 » » | 17 40 կ. |
| » » Ալեքսանդրօվօ | 28 » » | 18 50 » |
| » » Վլադիվոստ. | | |
| » » Ռոստով (Դոնի) | | 13—70 |
| Վլադիկաւկազ- Պետեր. | » » | 14 40 կ. |
| Պետերբուրգից Պարիզ | 60 » | 37 35 կ. |
| Մոսկուայից Պարիզ . . | 68 " | 38 » » |
| Բաքուից Կիսլովոդսկ | 12 80 | » » » |
| Ս. Պետեր. | | |
| Բաթ.—Բաքու վճարում են . . | 11 ր. 10 կ. | 7 ր. 40 կ. |
| Թիֆ.—Նուխի . | 1 » 53 » | 1 » 2 » |
| « Մեխայ. | 2 » 43 » | 1 » 62 » |
| » Քութա. | 4 » 8 » | 2 » 72 » |
| » Փոթի | 5 » 21 » | 3 » 47 » |
| » Բաթում | 6 » — » | 4 » — » |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| » | Աղստաֆ. | 1 | » | 92 | » | 1 | » | 28 | » |
| » | Գանձակ | 3 | » | 68 | » | 2 | » | 45 | » |
| » | Եւլախ | 4 | » | 53 | „ | 3 | » | 02 | » |
| » | Բագու | 8 | » | 10 | „ | 5 | » | 40 | « |

## բ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

### ԲԱԳՈՒԻՑ—ԲԱԹՈՒՄ. Սովոր. գն.

| վերստ | | II դ. | III դ. |
|---|---|---|---|
| 129 | Հաջի-Քաբուլ . . | 3.96 | 2.43 |
| 189 | Քիւրդամիր . . | 5.76 | 3.52 |
| 232 | Ուջարի . . . | 6.63 | 4.01 |
| 274 | Եւլախ . . . | 7.41 | 4.54 |
| 338 | Գանձակ . . . | 8.61 | 5.03 |
| 426 | Աղստաֆա . . | 10.13 | 6.26 |
| 513 | Թիֆլիս . . . | 11.36 | 6.97 |
| 585 | Գորի . . . | 12.38 | 7.59 |
| 627 | Միխայլովո . . | 12.83 | 7.87 |
| 686 | Կվիրիլի . . . | 13.38 | 8.20 |
| 672 | Քութայիս . . | 13.71 | 8.41 |
| 714 | Րիօն . . . | 13.65 | 8.37 |
| 743 | Սամտրեդի . . | 13.91 | 8.53 |
| 804 | Փոթի . . . | 14.50 | 3.83 |
| 840 | Բաթում . . . | 14.84 | 9.01 |



### Ռոստովից—Վլադիկաւկազ.

| վերստ | ՌՈՍՏՈՎ | II դ. | III դ. |
|---|---|---|---|
| | | Գները. | |
| 2 | Զարեչնայա . . | — | — |
| 10 | Բաթայսկայա . . | — 23 | — 15 |
| 34 | Կագալնիցկայա . | — 74 | — 49 |
| 58 | Սոեպնայա. . . | 1.26 | — 84 |
| 81 | Կուշչեօվկա . . | 1.74 | 1.16 |
| 99 | Կիսլեակովկա. . | 2.15 | 1.43 |
| 118 | ԿՌԻԼՈՎՍԿԱՅԱ *) . | 2.55 | 1.70 |
| 135 | Պաւլովսկայա . . | 2.91 | 1.94 |
| 151 | Լէուշկովսկայա . | 3.17 | 2.10 |
| 171 | Տիխորեցկայա. . | 3.60 | 2.47 |
| 192 | Մալոռոսսիյսկայա . | 3.89 | 2.57 |
| 211 | Միրսկայա . . | 4.14 | 2.76 |
| 229 | ԿԱՎԿԱԶՍԿԱՅԱ . . | 4.38 | 2.92 |
| 242 | Գուլկևիչի . . | 4.56 | 3.04 |
| 257 | Օտրադա-Կուբանսկ . | 4.76 | 3.17 |
| 273 | Կուբանսկայա . . | 4.88 | 3.32 |
| 280 | ԱՐՄԱՒԻՐ. . . | 4.97 | 3.50 |

*) Գլխաւոր կայարան. 2 բուֆեթ ունի

| | | | |
|---|---|---|---|
| 313 | Կոնոկովո . . | 5.70 | 3.80 |
| 335 | Նիկոլայեվսկայա . | 6 — | 4 — |
| 353 | Բագասլովսկայա . | 6.20 | 4.10 |
| 366 | ՆԵՎԻՆՆԱՄԻՆՍԿԱՅԱ. | 6.30 | 4.20 |
| 385 | Բարսուկի. . . | 6.40 | 4.40 |
| 410 | Կուրսաւկա . . | 6.90 | 4.60 |
| 428 | Նագութսկայա . | 7 — | 4.80 |
| 446 | Սուվորովսկայա . | 7.20 | 4 84 |
| 466 | ՄԻՆԵՐԱՑԼՆ. Վադա. | 7.50 | 5 — |
| 490 | Նեզլոբնայա . . | 7.80 | 5.20 |
| 510 | Զոլսկայա . . | 8.10 | 5.40 |
| 535 | Սոլդաթսկայա . | 8.20 | 5.60 |
| 554 | ՊՐԱԽԼԱԴՆԱՅԱ. . | 8.40 | 5.60 |
| 568 | Կոտլեարեվսկայա . | 8.70 | 5.80 |
| 584 | Բարոկովո . . | 8.80 | 5.90 |
| 599 | Էլխոտովո . . | 9.— | 6 — |
| 611 | Դար-Կոխ . . | 9.15 | 6.10 |
| 631 | Բեսլան . . . | 9.30 | 6.20 |
| 652 | ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ. . | 9.60 | 6.40 |



Պետրովսկու գիծը Բեսլանից

| | | | |
|---|---|---|---|
| 21 | Նազրան . . | 45 | 30 |
| 38 | Կարբուլախ . . . | | |
| 48 | Սլեպցովսկայա . | 1.04 | 40 |
| 57 | Միխայլովսկի . . | | |
| 70 | Սամաշկինսկայա | 1.52 | 1.01 |
| 87 | Ալխանիւրտսկայա | | |
| 101 | Գրօզնա . . . | 2.18 | 1.47 |

## դ) ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

ՓՈԹՈՒՑ

| Վերստ | ՓՈԹԻ | II դ. | III դ. |
|---|---|---|---|
| 14 | Ձելադիդի. . . | — 32 | — 21 |
| 35 | Նովօ-Սենակի . . | — 77 | — 51 |
| 48 | Աբաշա . . . | 1.04 | — 69 |
| 61 | ՍԱՄՏՐԵԴԻ . . | 1.31 | — 87 |

ԲԱԹՈՒՄԻՑ—ԹԻՖԼԻՍ։

| | | | |
|---|---|---|---|
| 20 | Քաբուլէթի . . | — 44 | — 29 |
| 35 | Նոթանէբի . . | — 77 | — 52 |
| 49 | Սուփսա . . . | 1.05 | — 70 |
| 68 | Լանչխուտի . . | 1.47 | — 98 |

| | | | |
|---|---|---|---|
| 75 | Նիգոյէթի . . | 1.62 | 1.08 |
| 88 | Սաջաւախո . . | 1.91 | 1.27 |
| 97 | ՍԱՄՏՐԷԴԻ . . | 2.09 | 1.39 |
| 108 | Կոպիտնարի . . | 2.23 | 1.55 |
| 125 | ՌԻՈՆ . . . | 2.69 | 1.75 |
| | Ռիոն—Քութայիս . | — 23 | — 10 |
| 132 | Աջամէթի . . | 2.85 | 1.99 |
| 154 | ԿՎԻՐԻԼԻ . . . | 2.87 | 2.10 |
| 366 | Ձիրուլի . . . | 2.95 | — |
| 175 | Բելոգորի. . . | 3.30 | 2.1? |
| 184 | Մարելիսի . . | — | — |
| — | Ցիպա . . . | — | — |
| — | Վառվառինո . . | — | — |
| 19 | ՄԻԽԱՑԻԼՈՎՈ . . | 2.45 | 2.57 |
| 2329 | Գոմի . . . | 3.45 | 2.74 |
| 243 | Քարելի . . . | 3.65 | 3.16 |
| 260 | ԳՈՐԻ . . . | 4.17 | 3.33 |
| 273 | Գրակալի. . . | 4.60 | 3.60 |
| 285 | Կասպի . . . | 5.05 | 3.76 |
| 300 | Քսանկա . . . | 5.55 | 3.86 |
| 310 | ՄՑԽԷԹ . . . | 5.85 | 3.90 |
| 320 | Աւճալա . . . | 5.93 | 3.95 |
| 330 | ԹԻՖԼԻՍ . . . | 6 — | 4 — |



ԹԻՖԼԻՍԻՑ—ԲԱԳՈՒ.

| | | | |
|---|---|---|---|
| 337 | Նաւթլուղ . . | —33 | — 10 |
| 350 | Աղ-Թաքլի . . | —45 | — 30 |
| 366 | Ղարայեազ . . | —80 | — 53 |
| 387 | Սօուխ-Բուլաղ . . | 1.20 | — 84 |
| 394 | Փոյլի . . . | 1.62 | 1.08 |
| 408 | Աղստաֆա . . | 1.92 | 1.28 |
| 427 | Թօուզ . . . | 2.33 | 1.55 |
| 452 | Ձեգամ . . . | 2.87 | 1.91 |
| 474 | ՇԱՄՔՈՐ . . . | 3.35 | 2.23 |
| 496 | Ելիսաւետպօլ . | 3.60 | 2.45 |
| 513 | Դալ-Մահմադլի . | 3.90 | 2.60 |
| 536 | Գեռան . . . | 4.22 | 2.81 |
| 559 | Եւլախ . . . | 4.53 | 3.24 |
| 583 | Լեաքի . . . | 4.48 | 3.24 |
| 602 | ՈՒՋԱՌԻ . . . | 5.10 | 3.40 |
| 626 | Մուսուսլի . . | 5.70 | 3.80 |
| 645 | Քիւրդամիր . . | 6 90 | 4 — |
| 668 | Սագիրի . . . | 6.— | 4 10 |
| 692 | ՂԱՐԱՍՈՒ. . . | 6.30 | 4.20 |

| | | | |
|---|---|---|---|
| 716 | Հաջի-Քաբուլ . . . | 6.60 | 4.40 |
| 733 | Նավագի . . . | 6.90 | 4.60 |
| 766 | Ալեաթ . . . | 7.20 | 4.80 |
| 787 | Սանգաչալ . . | 7.50 | 5 — |
| 812 | Փութա . . . | 7.80 | 5.20 |
| 830 | Բալաջարի . . | 7.90 | 5.40 |
| 840 | ԲԱԳՈՒ . . . | 8.10 | 5.40 |

ՏԻԽՈՐԵՑԿԻ — ՆՈՎՈՐՈՍԻՍԿ

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Ձելբաս . . | 37 | 17 |
| 27 | Բէյսուգ. . . . | 76 | 39 |
| 49 | Վիսելկի . . . | 1.38 | 40 |
| 68 | Ստանիչնայա . . | 1.91 | 98 |
| 90 | Պլաստունովկա . . | 2.54 | 1.30 |
| 100 | Դինսկայա . . . | 2.81 | 1.44 |
| 127 | Եկատերինոդար . . | 3.58 | 1.8 |
| 146 | Աֆիպս . . . | 4.11 | 2.10 |
| 156 | Սևերսկայա . . | 4.39 | 2.24 |
| 167 | Իլսկայա . . . | 4.70 | 2.40 |
| 182 | Լինէյնայա . . | 5.13 | 2.62 |



| | | | |
|---|---|---|---|
| 198 | Աբինսկայա . . | 5.58 | 2.85 |
| 208 | Կրիմսկայա. . . | 5.85 | 2.99 |
| 220 | Բականսկայա . . | 6.19 | 3.16 |
| 234 | Նովորոսիիսկ. . . | 7.15 | 3.66 |

ԹԻՖԼԻՍԻՑ—ՂԱՐՍ

| Վերստ | | | |
|---|---|---|---|
| 2 | Նաւթուլուխ. | 27— | 18 |
| 12 | Սողանլուխ. | 77— | 51 |
| 34 | Ջանդար. | 1.35— | 90 |
| 61 | Սադախլօ. | 1.86— | 1.24 |
| 85 | Ախտալա. | 2.25— | 1.50 |
| 103 | Սանահին. | 2.57— | 1.71 |
| 119 | Քոլագերան. | 2.75— | 1.83 |
| 126 | Շահալի. | 3.08— | 2.05 |
| 141 | Ղարաքլիսա. | 3.47— | 2.31 |
| 160 | Համամլի. | 3.71— | 2.47 |
| 178 | Ղօլթախչի. | 3.83— | 2.55 |
| 187 | Ջաջուռ. | 4.08— | 2.75 |
| 206 | ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ | 4.38— | 2.97 |
| 228 | Ստ. Ղարայեալ. | | |

| | | |
|---|---|---|
| 247 | Բոշկադիկլեար. | 4.64—3.08 |
| 265 | Սոսյեանկա Մայրա. | 4.88—3.21 |
| 278 | ՂԱՐՍ. | 5.06—3.27 |

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ—ԵՐԵՒԱՆ

| | | |
|---|---|---|
| — | ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ | — — |
| 24 | Աղին | 53— 35 |
| 43 | Անի | 93— 62 |
| 60 | Ալագեօզ | 1.29— 86 |
| 77 | Ղարս-Բուրն | 1.65—1.10 |
| 90 | Արաքս | 1.95—1.30 |
| 100 | Սարդար-Աբ | 2.16—1.44 |
| 120 | Էջմիածին | 2.60—173 |
| 132 | Ուլուխանլու | 2.85—1.90 |
| 145 | ԵՐԵՒԱՆ | 3.12—2.59 |

# ԵՐԱԶԱՀԱՆ

Ի՞նչից է առաջանում երազը, կամ երազում տեսած ամեն մի առարկայ ի՞նչ է գուշակում—դեռ մինչև օրս ոչ ոք ճշտօրէն բացատրած չէ, Թէև 'ի հնուց յետէ զանազան ժամանակներում եղել են երազների յայտնի բացատրողներ և մեկնիչներ, ինչպէս մեր այս տեսութեան վերջի մասում զետեղած երազների գուշակութիւնը, բայց քանի որ այդ գուշակութիւնները գիտութեան հիմնական փորձերով և ուսումնասիրութեամբ չէ բացատրուած, դժուար է հաւատ ընծայել երազի և տեսիլքների բացատրու-

քունը, գիտութեան համար յայտնի նշանակութիւն ունենալով—ինչպէս հետեւեալ ցուցակից կերեւայ—շատերն այժմ քննութեան առարկայ են շինել և ամեն մի մասնագէտ-գիտնական իւր տեսակէտից է քննում և հասկանում երազն ու տեսիլքը, այսպէս օրինակ.

Բնագէտը—այդ քննում է մարդկային մարմին համապատասխանող և բնական օրէնքներին հպատակուող երևոյթների տեսակէտից։

Բ ժ ի շ կ ը—համարում է մարդկային մարմնի գործարանների կանոնաւոր կամ անկանոն գործողութեանց արգասիք։

Հ ո գ ե բ ա ն ը (պսիխոլոգ) բացատրում է քնի ժամանակ, մարդու մարմնի մէջ գտնուած անյայտ գոյութեանց տեսակէտից, ինչպիսին են խելքը, հոգին և այլն։

Իսկ մագնիտիզմով և հիպնոտիզմով



պարապողները, երազի երևոյթը մի այլ տեսակ վճռելով և ընդունելով, իրանց տարբեր հայեացքներն ունենալու համեմատ էլ բացատրում են երազը։ Այսպիսով եթէ որ քունը և երազը միանգամից և միակերպ մինչև օրս դեռ չեն կարողացել բացատրել և վերջ դնել զանազան տեսակ կարծիքներին և մեկնութիւններին, նա առաւել դժուար է տեսիլքների և անուրջների պարզաբանութիւնը։ Ներկայումս մեծ մասամբ հաւատ են ընծայում բժիշկների ընդդիմախօսութեանը, որոնք հեշտ կարողանում են արհեստական քուն և երազ առաջացնել ուղիղ այնպէս, ինչպէս ոչնչացնում են անելոյդ քնարբութիւնը։ Մագնիսացնողն էլ ուղղակի քնեցնում է մարդուն առանց դեղատուան օգնութեան դիմելու (շարժուածքով, ձեռքերով և աչքերով) և միայն իւր

ազդեցութեան շնորհիւ գրգռում է ու թմրացնելով անզգայացնում։

Մինչև օրս եղած քննութիւններից նաև երևում է, որ երազներն, անուրջները ու տեսիլքները միշտ զանազան տեսակ են լինում, նայած մարդու կարողութեանը, կազմուածքին, նիստ ու կացին, և մարդկային խառնուածքների համեմատ, տարբերւում են միմեանցից և բնաւորութեան նշաններով. օրինակ, բարկացող մարդը՝ երևակայում է զարհուրելի կռիւներ, պատերազմներ և այլն։ Մելամաղձոտը՝ ձորեր, անտառներ և մթուր տեսարաններ։ Մաղասոտ՝ հեզաբարոյ մարդուն երևում է անձրև, ծով, ջուր, ձկներ, անտառներ։ Արիւնային խառնուածք (sanguinist) ունեցողին՝ զուարճալի տեսարաններ։

Այսպէս, երազները հետևանք են լի-



նում զանազան և անթիւ տպաւորութիւնների։

Մի քանի աստղագէտներ էլ պնդում են, թէ ինչպէս արևը, լուսինը և այլ մոլորակներն իրանց դրութեամբը և շարժումով ազդեցութիւն ունեն երկրագնդիս վրայ, այնպէս էլ ասում են նրանք, որ երազն էլ կախուած է նրանից թէ ի՛նչն է ազդում քնածին, լուսինը թէ արևը. նրանց կարծիքով լուսինը հովանաւորում է քնածներին այն ժամանակ, երբ արևը հակասում է քնին, բայց իբր թէ չի դադարում մարմնի վրայ բարերար ներգործութիւն անելուց։

Շատերն ասում են—ինչպէս էլ հընումը—որ քունը նման է մահուան, իսկ տեսիլքը կամ անուրջը մեր կեանքի ուղղութեան մի ինչ-որ տեսակն է։

Այսպիսի ազելութիւններին պէտք է

վերագրել ամեն ժամանակի և շատ ազգերի պատմութիւններից յայտնի տեսիլքների երևոյթները, որոնք շատ անգամ ուղիղ նախագուշակում էին աղէտներ և ուրախութիւններ։ Այս պատճառով էլ հին ժամանակներում թագաւորներն ունէին իրանց գուշակող-խորհրդատուներն, որոնք անուանւում էին պալատական աստղագէտներ և մեկնիչներ։

Շատ նոյնանման օրինակներ կարող էինք բերել այստեղ՝ եթէ թոյլ տար մեր այս հրատարակութեան չափը։ Բայց ժամանակը և գիտութիւնը դեռ շատ բան կասեն այս խնդրի վերաբերութեամբ, որ մեծամասնութեանն այնքան հետաքրքրական և դեռ ևս անմատչելի գաղտնիք է։

Վերջացնելով այս տեսութիւնը, աւելորդ չենք համարում մեր կողմից յայտնել, որ թէև մենք համամիտ չենք հետեւեալ երեսներում զետեղուած երազների առանց գիտնական հաստատ բացատրութեանը, բայց որպէս—դարերով ժողովրդի գործածութեան մէջ մտած—նրա հետաքրքրութիւնը շարժող—ընթերցանութեանը նպաստող և զբաւոր նիւթ մենք հրատարակում ենք։



---

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

### Զանազան տեսակ երազների մասին.

### Ա.

Աստուած.—Երազում Աստծուն տեսնելը՝ իբր թէ տեսնողի համար լաւ է բոլոր չարերից կազատուի. թէ աղքատ ինի կը հարստանայ, հիւանդ լինի կառողջանայ։ Երազում Աստծուն տան մէջ տեսնելը՝ նորոգութիւն է։

Աստղ.—Աստղ տեսնելը լաւ է. եթէ տան մէջ տեսնես՝ բարիքդ կաւելանայ, օտար տեղ լինիս, յաջողութեամբ կը վերադառնաս։ Եթէ շատ աստղեր՝ ճանապարհ կը գնաս և կը շահուես։

Ասպար առնելը՝ պատիւ է։

Արեգայ տեսնելը՝ յարգ, պատիւ կամ վերի է։

Աքաղաղ.—Զոհած աքաղաղը՝ բարի է և կռուի նշան։

Ագռաւներ.—Թշնամիներդ կը յարձակուեն քեզ վրայ։

Աթոռ տեսնելը մեծութիւն է։

Աթոռ նստելը՝ բարձրութիւն է։

Ալեոր.—Իրան ծերացած տեսնելը՝ հարստութիւն է։

Ալիւրը շահ և ուժ է։ Ալիւրն ամանով տեսնելը՝ մուրազ է։

Ականջը.—աղջիկ է, կնիկ և կամ աչքալուսանք։ Ականջ կտրելը վնաս է։



Աղաւնի տեսնելը՝ շնորհք է։

Աղուէս տեսնելը՝ ահ ու երկիւղ է, թէ որսաս՝ թշնամուդ կը յաղթես։ Աղուէսը, որ մարդուց փախչի—պարտականն էլ կը փախչի իրենից։ Աղուէսի հետ կռիւ անողը՝ իր օգտին կռիւ կ'անի։

Աղջիկ.—աղջիկ տեսնելը՝ խնդութիւն է։ Փոքր աղջիկ տեսնելը օգուտ է։

Աղբիւր.—Երազում աղբիւր տեսնելը շատ բաներից օգտուել է նշանակում. աղբիւրի վրայ լուացուելն՝ օգուտ է։ Աղբիւրից ջուր վերցնելը վատ է. աղբիւրից ջուր խմելը՝ շնորհք է և բարի։

Աղ.—Աղ և անանուխ տեսնելը՝ բարի և անուշ խօսք է. միմիայն աղ տեսնելը կսկիծ է, սպիտակ աղը՝ փող և օգուտ է. սև աղը՝ վատ խօսք և տրտմութիւն է. կոտրուած աղը՝ կռուի խափանում է։

Աղի ձուկը՝ հոգս է։

Աղեղն.—Աղեղ տեսնելը՝ գրոյթ ճոշք է։

Ամպերի ճայթմունք լսելը՝ բարի չէ։

Իրեն աղեղնաւոր տեսնելը թշնամանող լեզու է։

Աղիս հանելը՝ տան շինութիւն է և լաւ։

Աղքատին բան բաշխելը՝ բարի և օգուտ է։

Ամանաթ առնել և պահելը ճշմարտութիւն է։

Ամբաստանել մէկին՝ շատ վնաս է։

Այծ տեսնելը՝ ճանապարհ է։

Այրուած.—Այրուած հանդերձը՝ (շորը) երկիւղ է։ Այրուած և աւերուած տեսնել իր տունը՝ վնաս է։

Անձրև ժամանակ տեսնելը՝ բարի է։

Անդաստան տեսնելն՝ աշխատանք է։

Անուշ ուտելիքը՝ լաւ է։

Անապատում նստելը՝ նեղութիւն է։

Աչք տեսնելը՝ փողի շատութիւն է։



Աչքեր տեսնելը՝ շատ հարստութիւն է։

Մեծ աչք ունենալ՝ երկարակեցութիւն է. աչք հանել երազում, վատ դէպք է։

Ապարանջանը նեղութիւն և հոգս է։

Առիւծ.—Երազում առիւծ տեսնելը՝ թագաւոր, իշխան և կամ մեծ մարդ է։

Եթէ երկու առիւծ իրար հետ կըռուին՝ երկու թագաւոր կամ երկու մարդ կը կռուին։

Եթէ դու առիւծի վրայ նստած լինես իշխանութիւն է։

Եթէ Առիւծը՝ դէմդ դուրս գայ՝ մեծ մարդուց երկիւղ կը հասնի քեզ։

Առու.—Տանդ մէջ առու տեսնելը գանձ և օգուտ է։

Աստղ.—Եթէ բոլոր աստղերը թափուեն՝ շատ գանձ կը գտնես։ Եթէ առաջին աստղդ ընկնի՝ ճանապարհ

կը գնաս։ Առաջին ատամները հանելը վատ է։ Ներքին ատամներ հանելը՝ տրտմութիւն է, իսկ թէ վերը հանես, ազգականներիդ վնաս է։ Մնացած ատամները՝ հիւանդութիւն է։

Արեգակ.—Երազում արեգակ տեսնելը՝ թագաւոր է։ Արեգակը իր ձեռքում տեսնելը՝ պարոնութիւն է տեսնողի համար։ Խաւար արեգակ տեսնելը՝ տեսնող պարոնի համար չար է։ Երկնքից ընկած արեգակ տեսնելը՝ թագաւորի մահ է։ Արեգակ (մէկ) տեսնելը նեղութիւն է. արեն ամպի տակ տեսնելը՝ նեղութիւն կամ պայծառութիւն է։

Արծաթը նեղութիւն է։ Արմաւը՝ շատ բարի և անոյշ խօսք է։ Արմաւենին զաւակ և ուրախութիւն է։

Արին թափելը՝ մեծ վնաս է։

Սրին կամ արին անելը՝ շնորհք է։

Արծիւ.—Արծիւ տեսնելը՝ ազատու-



թիւն է։ Արծուի վրայ որ նստես՝ պարոնութեան կը տիրանաս։ Արծուի հետ որ կռուես՝ կամ խփես՝ մեծ մարդկանց կը նախանձես և հետները կը կռուես։ Եթէ արծիւը քեզ խփի՝ մի պարոնից զէնք կ'առնաս։

Արջ տեսնելը՝ անիրաւ և ագէտ մարդու խօսք է։ Արջից հալածուելը՝ կռուից կազատուես կամ մեծից զգոյշ կաց։

Ամեն գայլ գազան՝ թշնամի է։

Աւետարանը՝ մուրազ է։

Աւազանը՝ առճիկ և օգուտ է։

Աւազը որ ձեռք ածես՝ մեծ մարդուց բան կը առնաս։

Աւազակ որ տեսնես՝ զգուշացիր կռուից։

Աւագ.—Երան աւագ տեսնելը՝ շատ լաւ է և բարի։ Աւագ որ տեսնես՝ թըշնամին երկրի վրայ կը յարձակուի։

Աւրեղ.—որ է Սուլուխ՝ շատ գանձ է։

Բ.

Բարձրանալ Երազում և վայր ընկնել մէկի ձեռքով՝ վնաս է։

Բարձր տեղերի վրայ եթէ քայլես, մեծութիւն կը գտնես։

Բարձր տեղից ընկնելը՝ վնաս է։

Բառբառուտի և ուրիշ սազերի ձայնը՝ անոյշ խօսք է։ Բարև տալը՝ կռիւ է։ Բաղանիքը՝ հոգս է։ Բաղանիք եթէ գնաս, խարէութեան մէջ կընկնես։ Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսերից՝ կազատուես։ Բաղանիքում լուացուելը առճիկ և մեծ նեղութիւն է։

Բադ տեսնելը՝ մեծ մարդ է։

Բագ շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է։

Բանը լեզու է։

Բամբակն՝ արդարութիւն է։

Բանջարը՝ շահ է։

Բերդ որ տեսնես՝ թշնամիներից մօտ



ճշմարիտ դուրս կը գաս։ Բերդ մտնելը պարիսպ և ամրութիւն է։ Բերդի մէջ նեղութիւնից ազատուել է։

Բերան լուանալը՝ առճկի պակասիլ է։

Բիր տեսնես՝ կամ առնես՝ եղբայր կամ որդի է։ Բիր կորսնելը՝ եղբօր կամ ազգականին վնաս գայ։

Բլուր տեսնելը՝ երկրի խաղաղութիւն է։

Բու տեսնելը՝ նեղութիւն է։

Բուլկա տեսնելը կամ առնելը՝ լաւ չէ, կռիւ է։

Բուրդ.—Սպիտակ բուրդ տեսնել կամ առնելը՝ առողջութիւն և օգուտ է։ Սև բուրդը՝ տրտմութիւն է։

Բոբիկ իրեն տեսնելը՝ գինք կը գայ իր վրայ։

Բորոտ.—Իրեն բորոտ տեսնելը՝ գանձի շատանալ, մեծութիւն և շահ է։

Բողկ ուտելը՝ առողջութիւն և օգուտ է։

Բրել կամ գործել, բարի և շահ է։

## Գ.

Գառներ տեսնելը՝ մեծ շահ է։ Գառներ մորթելը՝ լաւ չէ. գառներ լուանալը՝ զէնք և ուրախութիւն է։

Գազան տեսնելը՝ տանից վնասք կռիւ և երկիւղ է։ Գազանի խաղալը՝ թշնամու հաշտութիւն է, իսկ փախչելը՝ խաղաղութիւն։

Գանձ տեսնել կամ առնելը՝ շահ է։

Գարին՝ բաղդ կամ բաժին է։

Գայլ սպանես՝ թշնամուդ կը յաղթես. գայլի վրայ նստես՝ նեղութիւն է։

Գաւազան որ տեսնես՝ թշնամուդ դէմ կ՚ամրանաս։ Գաւազանը ձեռքիդ՝ լաւ է, որդի կամ մեծ շահ է։

Գաւաթ բռնելը՝ զաւակի (ունենալու) խնդութիւն է։

Գետ.—Գետ անցնելը՝ ձի հեծնել է։ Յստակ ու պարզ գետին մտիկ տալը՝ առողջութիւն է, պղտորը՝ ցաւութիւն է. գետում լուացուիլը նեղութիւն է։ Գետում վերևից ներքև գնալը՝ պարտութիւն է։



Գերի տեսնելը՝ նեղութիւն է. իրեն գերի տեսնելը՝ մեծութիւն և շահ է։

Գերի.—Ճանապարհ գնալ՝ նեղութիւն է։

Գերանը որ կտրուի՝ տանուտէր կ՚մեռնի։

Գերեզման բացելը՝ վնաս է.—իրան գերեզմանում տեսնելը՝ պատասխանի ենթարկուել կամ բանտ ընկնել է։

Գեղեցիկ պատկերը նկարած տեսնել՝ փառք է։

Գէշ հոտը՝ գէշ խօսք է։

Գինի խմել կամ գնել՝ ոյժ և շահ է։

Գինձը՝ անուշ խօսք է։ Գինձ ուտել կամ ժողովելը՝ կռիւ է։ Գինձ հագնելը՝ մեծ շահ է։

Գիսաւոր աստղը՝ մեծութիւն և պատիւ է։

Գիրք կարդալը՝ ժողով է և նեղութիւն։

Գիր գրելը՝ բարի և մուրազ է։

Գլուխ.—Կտրած գլուխ ձեռքին առ-

նելը՝ շատ գանձ գտնել է, գլխին գեղ քաշելը՝ անուշ խօսք է, գլուխ ածելեք տալը՝ նեղութիւնից ազատուել. ուրիշ-ների գլուխն ածիլելը՝ ցաւից ազատուել է, գլուխ լուանալը կամ գլխալ բան տեսնելը՝ գինք է։ Սպիտակ գլուխը՝ յանկարծակի մնաս։

Որէն գլխատուած տեսնելը՝ մեծ վնաս է

Գխոր տեսնելը՝ ցոյց է տալիս ցըն-ծութիւն և աղքատութիւն։

Գնդակ խաղալը՝ մեծի համար լաւ է, իսկ փոքր մարդուն՝ վատ։

Գոմէշ.—Գետի մէջ գոմէշ տեսնելը՝ բարի կրոյց է նշանակում։

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է։

Գոյնզգոյն հալաւ՝ ուրախութիւն է։

Գորտի ձայն լսելը՝ ուրախութեան խօսք է։ Գորտ եթէ սպանես՝ հաւատա-ցեալ մարդու հետ հաշտութիւն կանես։

Գլխարկ ծածկելը՝ հարկիք է։



Գրաւական հանելը՝ իր տանից վնաս է։

Գրող տեսնելը՝ վատ է։

Գրիչ և կաղամարը, խելք կամ ճանապարհ է։ Գրչամանը՝ կին է։

Դ.

Դանակ տեսնել կամ գնել, լաւ չէ, բայց վատ լեզուն խափանել է։

Դաշտ՝ անու բան կ'անես։

Դաշտից որ դուրս գաս՝ ազատութիւն է։

Դատաւորն՝ Աստուած է և դրութիւ-նըդ կ'լաւանայ։

Դատաստանը՝ մեղաց քննութիւն է։

Դարպաս շինել կամ տեսնելը՝ նա-րաստ կնիկ է։ Դարպաս լայնացնելը պարոնութիւն է։ Դարպաս փակելը՝ մեծ մարդուց վնասուել է։

Դարբինը մեծ մարդ է։ Դարբնութիւն թէ ինքդ անես, լաւ տանուէր կը լինիս։ Դարբնի հարուածը, ամենը բարի է։

Դեղին գոյնը՝ բոլորովին վատ է։

Դեւը՝ նեղութիւն և մեղաց նշան է։

Դդում ցանելը՝ ջերմ, իսկ ուտելը հիւանդութիւն է։

Դիակ՝ բարի զրոյց է։

Դիպակ տեսնել կամ հագնելը՝ մեծ պատիւ է։

Դմակ տեսնել կամ ուտելը՝ հիւանդութիւն է։

Դուռը՝ պատիւ է և մեծ մարդու հետ ծանօթանալ։ Դուռ բանալը՝ իր բաղտի բացուիլ և իր կամքի կատարուիլն է։ Դուռ ձգելը՝ կործանումն։ Դուռ կտրելը՝ վատ նշան է։ Դուռը դուրս դալը՝ լաւ չէ։

Դրամ տեսնել կամ ժողովելն՝ ապահութիւն է։

Դպրանոցին բարև տալը՝ կռիւ է։

Ե.

Եզն՝ ահի մէջ գնալ։ Եզը նստած տեսնես՝ մեծ աւետիս է կամ ափ-



մելիք կը գայ։ Եզան միս ուտելը՝ լաւ է բայց ոմանք ասում են թէ նեղութիւն է։ Եզների կռուելը՝ թշնամի է։ Եզը մորթել՝ վնաս է։ Եզ ուտելը՝ բարի է։

Եղնիկը տանը տեսնելը՝ սիրելին գայ։

Եկեղեցի տեսնել կամ շինելը՝ փառք է.—Եկեղեցի երթաս ազատութիւն է։

Եղջերուն՝ երկրի նեղութիւն է։

Երգեհոնը՝ առատութիւն է։

Երկինք բարձրանալը՝ մեծ պատիւ է։

Երկիրն՝ խնդութիւն է։

Երկանք տեսնել կամ աղալն՝ անհանգստութիւն է։

Երկաթ տեսնել կամ գնելը՝ տրտմութիւն և շատ վատ է։

Երակ կտրելը՝ վնաս է։ Երակից արիւն առնելը՝ ողջութիւն է։

Երես լուանալը՝ զէն է.—Դեղին երեսը մեղք է. կարմիր երեսը՝ գործը լաւ կերթայ.—Գեղեցիկ երեսը՝ մեծ փառք է։

Երազ պատմելը երազում շատ լաւ է։
Երէցը յարութիւն առնելիս՝ հին զրոյց է։ Մեռած աւագ էրեցին կենդանացած տեսնելը՝ մեծ զրոյցի նորոգուիլ է։ Երէցին մեռած տեսնել՝ մեծ զրոյցի խափանումն է։ Երէցի գրիչ տեսնելը՝ խելք ու ճանապարհ է։

Զ.

Զանգակի ձայն լսելը՝ խնդութիւն և ուրախութիւն է։
Զաֆրանը՝ հիւանդութիւն է։ Զաֆրանով կերակուրը՝ լաւ է։
Զենելը—մորթելը՝ մեծ նեղութիւն է։
Զինուորը՝ տրտմութիւն է։
Զմրուխտը լաւ է։
Զնդանը մեծ հոգս է։
Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսես՝ անձրև կամ կռիւ է։
Զրոյց անելը՝ նեղութիւն է։
Զրահը՝ վատ է։ Զրահ հագնելը՝ զէն է։



Է.

Էշը՝ շատ նեղութիւն է. սպիտակ էշին հեծած կամ բեռած՝ բարի է և պատիւ

Ը.

Ըղունգ ունենալը՝ ազատութիւն է։
Ընկոյզ ժողովելը՝ լաւ չէ։

Թ.

Թագաւորին ողջունելը՝ փառք է։
Թամբ շինողը՝ խռովարար է։
Թանաք եփելը՝ լաւ է։ Թանաք վերեից թափելը՝ վատ խօսք է։
Թարախով խրամ տեսնելը՝ չար է և հարստութիւն։
Թաղնուած խրամ տեսնելը՝ բարի է։
Թեւաւոր խրամ տեսնելը՝ հոգիների հանդիպել է։
Թիր բանը՝ նեղութիւն է։
Թղի ծառը՝ վերջ մարդ է.—Թուզը (կա

ձաչ) տեսնել կամ ուտելը վնաս է։ Թուզ (չոր) ուտելը՝ շահ է։

Թուխ իրան տեսնելը՝ մեծութիւն է։

Թռչելը՝ ուրիշ տեղ գնալ է։ Թռչել կտրից՝ այլ կին առնել է նշանակում։

Թռչել բարձրանալու համար՝ լաւութեան հասնել է. Թռչելիս՝ ուրիշ երկրում մեծութիւն կ՚ստանայ։

Թռչունի քեզ մերձենալը՝ մի անձն երանի է տալիս քեզ. Թռչուն արձակելը՝ բարութիւն է. Թռչունի փախչելը՝ վնաս է։

Թռչունների կռուելը՝ վնաս է։ Թռչունի հետ խաղալը՝ թշնամիքդ կ՚սիրեն քեզ։

Ժ.

Ժամատունը եթէ զարդարած տեսնես՝ արքայութեան արժանի կը լինես։

Ժամ գնալը՝ կեանքդ բարի լինել է։

Ժամատանը աղօթելը՝ լաւ բան անել է։

Ժամհարը՝ փառ դրութեան կը հասնես։

Ժուռ գալը՝ լաւ չէ։

Ժամացոյցը՝ օգուտ է։



Լ.

Լոյսն.—աշխարհի խաղաղութիւն է. —հանգած լոյսը տրտմութիւն է։

Լուսին—և արեգակն առաւօտեան տեսնելը՝ ազգին վնաս է։

Լուսնի ասողը՝ խիստ շահ է.—կարմիր լուսինը՝ վնաս է։

Խաւար լուսինը՝ թագաւորի մահ է.—երկու լուսին տեսնելը՝ թագաւորներ իրար դէմ կը վերկենան։

Լուն՝ առճիկ է։

Լուծը՝ (եզների) բարի է։

Լեառն (բարձր) որ տեսնես՝ ազատութիւն է։

Խ.

Խան կամ սուլթան տես՝ անչափ լաւ է։

Խաչակնքել երազում՝ մեծ պատիւ է։

Խաչը՝ չարչարանք է։

Խաւարը՝ նեղութիւն է։

Խաւեարը՝ հիւանդութիւն է։

Խաղողը՝ անձրև և ցնորք է.—սպի-
տակ խաղողը՝ խնդալ է։ Սևը՝ լաւ է.
ժողոված խաղողը՝ գանձ է։

Խայահանդերձը՝ իշխանի մահ է։

Խեցեղէն աման բանելը՝ ուրախու-
թիւն է։

Խմոր ուտելը՝ շահ է։

Խնդալը՝ լաւ չէ։

Խնձորը՝ տղայ է, իսկ ուտելը՝ շահ.—
խնձոր առնելը՝ բարի համբաւ է.—խըն-
ձորի ծառը մեծ մարդ է։

Խուլը և համրը՝ շահ է։

Խունկ ծխելը՝ ապրանք և անոյշ խօսք է

Խորոված միս ուտելը՝ շահ է։

Խոզը՝ այլազգի է.—խոզի՝ միս
ուտելը՝ ազգականների մահ է։

Խոտը՝ լաւ մարդ է.—խոտ ժողովելը
պատիւ և փառք է։

## Ծ.

Ծաղիկ.—Ծաղկեայ անդաստանը՝ նշան



և ուրախութիւն է. ծաղկելն՝ անհան-
գստութիւն է. ծաղիկ քաղելը՝ կին առ-
նել է. ծաղկելը՝ բարի է։

Ծառ.—Ծաղկած ծառը—պտղով ծառը՝
բարի է. ծառ կտրելը կամ այրելը
վնաս է. ծառը եթէ ծխի՝ լաւ չէ. ծառի
տերև թափուելը՝ արիւնհեղութիւն է.
մեծ ծառ վայր ձգելը մարդուն վատ է. մեծ
ծառ կտրելը՝ մեծ մարդու մեռնիլ է. ծառի
վրայ նստելը՝ և մանգալը՝ փառք է. կա-
նաչ ծառը՝ գանձ է. չոր ծառը՝ տրտ-
մութիւն է. ծառ զուգելը կին է։

Ծամ (հիւս) կտրելը՝ բաժանումն է։

Ծառան՝ աւետիք և խնդութիւն է։

Ծարաւելը՝ բարի չէ։

Ծանր բան շալակելը՝ մեծ մեղք է։

Ծիծաղելը՝ տրտմութիւն է։

Ծիծը՝ տղայ կամ մեծութիւն է։

Ծնանելը՝ (կնոջ) մեծ շահի գալ է։

Ծունր դնելը՝ առ Աստուած յոյս է։

Ծով.—պղտոր ծովը՝ նեղութիւն է. ցամաք ծովը՝ աշխարհի լիութիւն է. ծովում լուացուելը՝ շահ է. ծով մտնելը՝ թշնամիներից կարդարանայ. ծովը որ մարդու ներս քաշի՝ գերի ձեռքով սպանուիլ է նշանակում։ Ծովակի վրայ նստելը՝ զուարթութիւն է. ծովից դուրս գալը՝ պատիւ է և ազատութիւն,- չը դուրս գալը՝ մեծ վնաս է։

Ծեր.—ծերութեան ժամանակ իրան մանուկ տեսնելը՝ կեանքի աւելանալն է։

—Իրան ծեր տեսնելը մանկութեան ժամանակ՝ նոյնպէս կեանքի աւելանալն է։

## Կ.

Կամուրջ շինելը՝ շատ լաւ է։

Կառք նստելը՝ մեծ պատիւ է։

Կայծակը՝ խռովութիւն է։

Կարկուտը՝ երկրի նեղութիւն է։

Կարասը՝ նեղութիւն է։



Կաղամբի տակ հանելը՝ վնաս է։

Կենդանի իրան գերեզմանի մէջ տեսնելը՝ մեծ զրոյց է։

Կին առնելը՝ վնաս է. կնոջ հետ խօսելը՝ տրտմութիւն է. մազերն արձակած կինը՝ նոյնպէս վնաս է. գեղեցիկ զարդարած կինը՝ երկիր է կամ քաղաք. կնոջ մազ կտրելը՝ շատ վնաս է. կնոջ նայիլը՝ բարի և լաւ է։

Կիտրոնը՝ անոյշ խօսք է։

Կոյս.—իրան կոյս տեսնելը՝ խիստ շահ է. կոյսի հետ խօսելը տրտմութիւն է. կոյսի հետ հաց ուտելը՝ բարի է։

Կուժը—որդի է. ջրով կուժը՝ բոլորովին բարի է։

Կորեկը տանը տեսնելը կամ ուտելը լիութիւն է։

Կրակ ձգելը՝ սով է։

Կտաւ հանելը՝ բարի չէ։

Կօշիկ տանը տեսնել կամ հագնելը՝ ճանապարհ է։

Հ.

Հաց տեսնել՝ երազում բարի է և լաւ։

Հաւ.—հաւը ձուի վրայ՝ անակնկալ շնորհք է. հաւ-սիրամարգ մեծ իշխան է. հաւի խօսելը՝ մարդու կեանքից զրկուելն է։

Հագուստ առնելը՝ մարդու ծեծ է։

Հասկ քաղելը՝ ուրախութիւն է։

Հարսանիքը՝ տրտմութիւն է։

Հայրապետը՝ մեծ զրոյց է։

Հայր.—մեռած հօրը կենդանացած տեսնել՝ մեծ շահ է։

Համր և խուլը՝ շահ է։

Հալւա այրած տեսնելը՝ կնոջից շահուել է։

Հանդերձ կորցնելը՝ վնաս է։

Հեռաւոր տեղ իրան տեսնել՝ կամ ուրիշ մէկին՝ շահ է և բարի։



Հիմք ձգելը՝ հաստատութիւն է։

Հիւանդը՝ նեղութիւն է։

Հող վեր առնելը՝ նեղութիւն է։

Հում միս ուտելը՝ մեծ զրոյց է։

Հոր փորելը՝ շատ նեղութիւն է։

Ձ.

Ձի.—սպիտակ կամ սև ձի նստելը՝ բարի է և պատիւ. փախող ձի նստելը խիստ լաւ է. սև ձի կամ ջորի նստելը մեծամեծներից շահ առնել է։ Ձին սարում տեսնելը՝ մեծութեան հասնելու նշան է։

Ձեռը լուանալ՝ բարի է. ձեռից ճըրագ բռնած՝ որդի լինի քեզ։

Ձէթ եփելը՝ մուրազ և լաւ է։

Ձու տեսնել կամ ժողովելը՝ կռիւ է։

Ձոր տեսնել կամ անցնելը. նեղութիւնից կ՚ազատուես։

Ձուկը՝ չար լեզու է.—Ջրից հանած ամպ, ձիւն կամ ջերմ կ՚լինի. ձուկը ո-
կրակին տեսնել՝ երկրի նեղութիւն է։

## Ղ.

Ղամպար վառելը՝ բարի է։

## Ճ.

Ճանապարհ գնալն ու գալը բարի է։
Ճոտն՝ երկայն ճանապարհ է։
Ճաշ՝ գրած տեսնել կամ լսել՝ հոգս է։
Ճնճղուկ տեսնել կամ բռնելը՝ բարի է։
Ճրագ վառած՝ ծածուկ գործ կ'յայտնուի. անցած ճրագը տան կործանումն է։

## Մ.

Մատանի.—մատանին՝ իշխանութիւն է. մատանին կոտրած՝ վնաս է. մատանին կորցնել՝ կինդ կամ սիրելիդ կը վնասուին. երկու մատանի ունենալը՝ երկու կին կ'առնես. արծաթի մատանի՝ նեղութիւնից ազատուելու նշան է։
Մարգարիտը՝ մեծութեան նշան է։
Մարդու լերդ ուտելը՝ գանձ գտնել է. մարդու ոսկոր ուտելը՝ բանտ մտնել է. փոքր մարդը շնորհք է։



Մեխեր ժողովելը լեղուներ են։
Մեծահասակ իրան տեսնելը՝ փառք է։
Մեծ փակեղ ուսումդ ձգելը՝ շնորհք է
Մեռել.—իրան մեռած տեսնելը՝ շատ ապրել է. մեռելը թէ խօսի զգոյշ կաց մի հաւատայ. մեռել թաղելը՝ շփոթուել է. մեռելը գերեզմանում տեսնելը չարը կ'խափանուի. շատ մեռելներ տեսնելը՝ թշնամիներդ կ'յարձակուեն։
Մեղր ուտելը՝ արտնեղութիւն է։ Մետաքս տեսնելը՝ օգուտ է։
Միս տեսնել կամ ուտելը հիւանդութիւն է, իսկ խորոված միս ուտելը՝ շահ։
Միրգ ուտելը՝ հիւանդութիւն է։
Մոմը վառած՝ ուրախութիւն և որդի է։
Մորեխը՝ հոգս է և աշխարհի վնաս։
Մութը՝ վնաս է և չար։
Մուկը՝ նոյն է։
Մորուքով իրան տեսնելը՝ շնորհք է։

## Ն.

Նախիրը որ գետը գնայ՝ պաշտօն է։

Նապաստակը՝ իրեն աղայ լինի։

Նաւ.—Նաւորդ լինելը՝ զրոյց դուրս գալ. ոսկու կամ արծաթի նաւը՝ բարի է. նաւ նստես՝ շատ կ՚ապրես. նաւերի խումբ տեսնես՝ շահ կ՚գայ քեզ. նաւը գանձով՝ նեղութիւն է. նաւ այրելը երկրի վնաս է. կորած նաւը՝ վատ է։

Նոր բան տեսնելը՝ օտարութեան կ՚երթաս։

Նուռը՝ օտարներից շահուել է։

Նստել և ողբալը՝ շատ նեղութիւն է։

## Շ.

Շապիկ սպիտակ տեսնել կամ կարել՝ արդարութիւն է. սևը՝ տրտմութիւն է, աղտոտը մեղք է։

Շինութիւն կառուցանելը՝ բարութիւն՝ քանդելը՝ վնաս։



Շաքարաջուր խմելը՝ իմաստութիւն է։

Շիշ խզում՝ ռոճիկ և շահ է։

Շորը՝ փառք է։ Շորեր (նոր) ուրախութիւն և շնորհք է։ Շորեր գոյնզգոյն վնաս է։ Թալաշորեր, աւագ մարդ մեռնի։ Շորեր կորցնելը վնաս է։

Շուն.—շների իրար հետ կռուիլը՝ վատ է. շունը որ հաչէ կամ կծէ՝ չար լեզու է և չար մարդուց պէտք է զգոյշ լինես։

## Ո.

Ոսկին կամ արծաթը՝ շահ է։ Ոսկէ խնձորը՝ պատիւ է։

Ոչխարը—ձմեռ է և ցուրտ. սև ոչխարը՝ սուգ և տրտմութիւն է. ոչխարը ճանապարհին հարստութիւն է։

Ողբալը՝ շատ նեղութիւն է։

Ուղտը—պարոն է. երկու ուղտի կռուիլը իշխաններ կ՚կռուեն. էգ ուղտ նստելը հիւանդութիւն է։

Որս գնալը՝ բարի է։

Չ.

Չամիչը՝ շատ վնաս է։

Չամանը՝ կռիւ և աղաղակ է։

Չանկը՝ տրտմութիւն է։

Չիրը՝ սակաւ շահ է։

Չուխա.—կանաչ չուխան՝ հարստութիւն է. սևը՝ տրտմութիւն։

Պ.

Պատարագը կռիւ է։

Պարտէզ տնկելը՝ բարի է։

Պղպեղը—կսկիծ է. պղպեղ ուտելը՝ թշնամիներից պատրաստ կաց։

Պսակ—արծաթի՝ հիւանդութիւն է. փշից պսակ շինելը՝ մեծ շահ է. քարից շինած պսակը՝ մեծութիւն է։

Պսակուիլը՝ լաւ է, յաճախ կռիւ է։

Ջ.

Ջաղաց—շինելը՝ մեծութիւն է. քանդելը՝ շինութիւն է. ջաղացի աղօնը հիւանդութիւն է։



Ջայլամը՝ նեղութիւնից կ'ազատուես

Ջուր—սուրբ խմելը՝ լաւ է. պղտոր ջուրը տեսնելը կամ խմելը՝ տրտմութիւն է. տանդ մէջ ջուր տեսնելը՝ լաւ չէ. գնացող ջուրը՝ բարի է. գետից ջուր վեր առնելը՝ վնաս է. աղբիւրիցը՝ բարի է։

Ռ.

Ռեհանի ծաղիկը՝ բարի է։

Ռումբ—կանգնած ռումբը՝ մեծութիւն և պատիւ է. ձեռքին ռումբ բռնելը՝ ճանապարհ է և երկիր։

Ռուս տեսնելը՝ մեծ հակառակութիւն է։

Ս.

Սագը՝ մեծ մարդ է։

Սագը.—սագ ուտելը հիւանդութիւն է։

Սալորը՝ առողջութիւն է։

Սամիթ.—դալարը՝ լաւ, չորը՝ վատ է։

Սանդուղ (կանգնած) մեծութիւն է։

Սանդր բռնելը՝ զէնք է։

Սենեակ քանդելը՝ կնոջից բաժանուիլ է։

Սեխը՝ լաւ է, ուտելը՝ հիւանդութիւն։

Սիսեռը՝ բարի է։

Սիւնը՝ նեղութիւն և կախ է։

Սխտորը՝ կսկիծ է։

Սոխը.—կսկիծ է. ուտելը՝ հիւանդութ.

Սուգ անելը՝ ուրախութիւն է։

Սուլուխ տեսնելը՝ գանձ է։

Սուլթան տեսնելը՝ անչափ ցաւ է։

Սիրամարգ տեսնելը՝ մեծ եղջիւր է։

## Վ.

Վախեցած իրան տեսնել՝ օգուտ է։

Վանք և աբեղայ, նեղութիւն է։

Վառած. մէկին տեսնել վնաս է. Իրան վառած տեսնելը հարստութիւն է։

Վարդ.—կին կ'առնես. վարդ քաղելը բարի է։

Վերմակը՝ հարուստ կին է։

Վիշապը՝ մեծութիւն կամ վնաս է։



## Տ.

Տաճար զարդարած՝ բարի է. տաճար այրելը թշնամիքդ կը կռուին։

Տաճիկը՝ թշնամիների յարձակումն է։

Տախտը՝ մեծութիւն է։ Տախտը դիպակով՝ բարի է. տախտը, կանաչ, ցաւ է։

Տանձ ուտելը՝ հիւանդութիւն է։

Տառեխ-ձուկը՝ ճանապարհ է։

Տիկը՝ տրտմութիւն է։

Տիկինը՝ նոյն է։

Տղայի գիրկն առնելը, ցաւ է։

Տուն—շինելը՝ շատ բարի է. տուն քանդելը՝ վատ է. իր կամ ուրիշի տունը քանդուած տեսնելը՝ անիրաւութիւն է։

## Ց.

Ցեցը—լեզու է. ցեց հանելը՝ նեղութիւն կամ լաւ է։

Ցեխը՝ վնաս և տրտմութիւն է։

Ցորեանը՝ ցնորք է։

Ցուլ բռնելը՝ լաւ է։

## Փ.

Փայտը, շատ բարի է։

Փոխինձ ուտելը՝ զէնք է։

Փող ածելը՝ մեծութիւն և բաղդաւորութիւն է։ Մարդուց փող առնելը՝ շատ է, իսկ եթէ կինն փող՝ առնի տղայք կունենայ։

Փուշ կտրելը՝ թշնամիներին կորուստ է։

Փոքր մարդը՝ շնորհք է։

## Ք.

Քաղաք մտնելը՝ բարի է։

Քաղցր բան ուտելը՝ լաւ չէ։

Քար ձգելը՝ վնաս է. քար ժողովելը՝ լեզու է. քարից հիմք ձգելը՝ թշնամի է։ քարի վրայ նստելը՝ մտածմունք է։

Քացախ խմելը՝ չարը կ՚խափանուի։

Քղամիտ հագնելը՝ խնդութիւն է։

Քահանայից խաչ առնելը՝ վիշտ է։

Քող տեսնելը ճանապարհ է ցոյց տալիս։



## Օ.

Օձը.— թէ հետդ խօսի, այնպիսի բան կ՚անես որ բոլոր աշխարհը կ՚զարմանայ. օձ թէ սպանես՝ թշնամուդ կ՚յաղթես. մահճիդ վրայ եթէ օձ տեսնես՝ կին կ՚առնես. օձը թէ խայթէ՝ թշնամիներից վնաս գայ. օձը թէ վրադ յարձակուի թշնամիներից ահ գայ. օձը թէ փորդ մտնի՝ թշնամիներդ կը չարախօսեն. օձին անկողնում սպանելը՝ կինը կ՚մեռնի. օձ տեսնես և չվախես՝ թշնամիներիցդ անհոգ կաց. օձը տանդ մէջ տեսնես, կինդ կը թշնամանայ. օձին՝ թէ երկու կտոր անես՝ թշնամուցդ շահ կ՚գայ։

Օղի խմելը՝ ուրախութիւն է։

Օշինդր տեսնել կամ խմել՝ կռիւ է։

## ԵՐԱԶԱՑՈՅՑ ԼՈՒՍՆԻ

Լուսնի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30 օրն—Երազն ի բարին կատ.

» 2, 10, 12, 16, 28—Երազն ե-րեք օրն կատարի։

» 8—Երազն ութ օրն կատարի։

» 23—Երազն երեսուն օրն կատ.

» 14—Երազն քառաս. օրն կատ.

» 11, 15, 17—Երազն օրն կատ.

» 6—Երազն ի տարին կատարի։

» 29—Երազն լաւ է։

» 4, 7, 20, 21, 24, 25, 27—Երա-զըն սուտ է։

---



## ԻԳՆԱՏԻՈՍԻ ԱՐԱԾ ՓՈՐՁԵՐԸ

*մարդու մարմնի խաղերի մասին*

---

Գագաթը երբ խաղայ՝ բարի է, ա-մենքից սիրուի, իշխաններից պատուի, ճանապարհորդի, շահի և ուրախանայ։

Գագտն՝ մեծութեան նշան է, ճանա-պարհ գնայ և ուրախանայ։

Գլխի վերի կողմը՝ պատիւ է և հոգո-

Գլխի ամբողջ խաղալը՝ շատ բարի է, կորուստ կ'ունենայ, գաղտնիք տեսնէ և լսի։

Ճակատը՝ շատերից պատուի, գան-
գտնի և մեծ փառքի հասնի։

Քներակն աջը՝ ցաւից ազատուի, կա-նանց պատճառաւ հոգս քաշի և վնասուի

Ձախ քներակն՝ լռութիւն, շնորհք և պատիւ է կամ մարդու հետ կռուի։

Յօնքն աջը՝ կորուստը գտնի և սրտին թեթևութիւն լինի.—ձախը՝ լռութիւն, կեանքի երկարութիւն շահի կամ տկարանայ.—յօնքի մէջը՝ նեղութեան համբաւ լսի, անկարգ բանի հանդիպի, տրտմի և վիրաւորուի։

Աչքը—աջ աղբիւրն՝ սրտնեղութիւն, տրտմութիւն է, բայց բարի լինի, թշնամու հետ կռուի, վէրք կամ լաց է.—ձախ աչքի աղբիւրն՝ բարի և առողջութիւն, հեռաւորին տեսնի և սրտնեղի. աջ աչքի յետի աղբիւրը՝ շատ բարի է, հեռաւորին տեսնի և խնդայ.—ձախ աչքի աղբիւրն՝ հարստութեան և մեծութեան հանդիպի, ազգականներին տեսնի և խնդայ.—աջ աչքի վերի կոպը՝ հարստութիւն է, ցնծայ կամ սրտնեղի, արտասուի, բայց շատ



ազատուի.—ձախ աչքի կոպը՝ ատելութիւն և լաց է. յետոյ բարի և ուրախութիւն.—աջ աչքի ներքևի կոպն՝ հեռու ճանապարհ գնայ, հեռաւորին տեսանէ, բարի և խնդութիւն է.—ձախ աչքի կոպն՝ ցնծայ, ցանկացածին հասնի.—աչքի աջ պոչը՝ սրտնեղութիւն է.—ձախ աչքի պոչը՝ բարի է.—աչքը ողջ խաղայ (աջ) բարի է, առողջանայ. հեռաւորն գայ.—ձախ աչքն ողջ՝ շատ բարի է, գանձ գտնի, սրտնեղի և զայրանայ.—աջ աչքը կոպերով՝ հեռաւոր տեսնի.—ձախը՝ հիւանդանայ, բայց ապրի։

Արտևանունքն աջը և վերինը՝ հեռաւորն գայ, տրտմի և իր կամքը կատարի.—ձախը՝ խնդայ և առողջութիւն գտնի.—աջ ներքևի արտևանունքը՝ լաց և սրտնեղութիւն է.—ձախը՝ սրտնեղութիւն է, բայց հեռաւորը գայ։

Ոկտաառակն՝ մեծ մարդկերից պատուիս

Քիթն՝ աջը, քիչ հիւանդանալ, նեղութիւնից ազատուել, կռուել.—ձախը՝ որդի լինել, թշնամիներին յաղթել և առողջանալ։

Քթի ամեն մասերը՝ մեծերից շահ է։

Քթի ծայրը, պարտքից ազատուել, վշտանալ կամ մարդու հետ կռուել։

Քթափողը՝ մարդու հետ սիրահարուել կամ պարտքից ազատուել։

Քթի օղը՝ հարստանալ.—երկու պինչը՝ հարստանալ, կամ սրտակիցն մնասուել,

Այտն աջ, տրտմել, հիւանդանալ և առողջանալ.—ձախը՝ որդի լինի սըրտոնեղել, խնդալ և հարստանալ։

Երեսն աջ, գանձ գտնել և առողջութիւն է.—ձախը տրտմել, տկարանալ. վէրք ստանալ և կեանքը կարճ լինել։

Ականջն աջը—համբաւ լսել, խնդալ, տկարանալ և ազգականը մեռնել.-ձախը



հեռաւորը գալ և առողջութիւն է։

Շրթունքի երկու կողմը՝ բամբասանք լսել տրտմել և օգտալ. ներքևի և վերևի մասերը երբ խաղա իր սիրելիին համբուրել։

Շրթունքները՝ բարի է, գումար ստանալ։

Վիզն աջ՝ հեռու տեղից շահ գալ, բան գտնել, հարստանալ.—ձախը խնդալու հարստանալ և բամբասանք լսել. ամբողջ վիզը նեղութիւն, տանն այլուր և վիզը սրով կտրուել։

Թիկնամէջն աջը հարստանալ, բայց սրտնեղել.—ձախը՝ այն բանը կ'անէս որ պատիւ չէ։

Թիկունքը, յաջողակէ պատրաստ կայ։

Արմունկն—աջը սէր է, պաշտօն ստանալ, գլուխը ցաւել, տրտմել հիւանդանալ և Աստուծով շուտով առողջանալ.—ձախը ցնծութիւն է, հիւր գնալ; վիրաւորուել և հիւանդանալ։

Բազուկն աջը, համբոյր է, ցնծալ և

համբառնայ.—ձախը, բարի և շահ լինի, մարդկանցից պատիւ ու գանձ գտնի։

Թեւն աջը ցաւի և նեղութեան հանդիպի.—ձախը վշտանայ։

Ձեռն աջը եթէ ողջ խաղայ, մեծերից պատուի, հարստանայ և ցնծայ, կամ դժբաղդութիւն պատահի, զգոյշ կաց.—ձախը բարի է, թագաւորից պարգև առնայ, խնդա և հարստանայ։

Մատները աջ ձեռքի կ'սրտմի, վերջը սիրտը կ'հանգստանայ—ձախ ձեռքինը, գանձ և պատիւ է։

Ոտն աջը՝ առողջութեան նշան է և հեռու չարեր հալածի.—ձախը խնդայ Աստուածանից և մարդկանցից պատիւ ու պարգև առնայ։

Ծիծն աջը ուրախանայ, ազգականները զօրանան, բազմանան.—ձախը հետաւոր տեսնի, ընտանիքով խնդայ։

Կուրծքը խնդութիւն, բարի համբաւ,



հարստութիւն և սէր է.—աջը բարի է, չարից ազատուի, անկարգ գործի պատճառով զղջայ.—ձախը, ամենքը կսիրեն և չարից կ'ազատուի։

Սիրտը սրտի նեղանալ է և տրտմութիւն.—աջը իր սիրելիքը շատանան և ուրախանան.—ձախը տրտմութիւն է։

Ողն պսակուի, զաւակ կ'ծնի և մեծութեան կ'հասնի.—ողի մէջը՝ բարի է։

Կողն աջը մեծութիւն է, պսակուի, բարի է և ցնծութիւն ինչ էլ խնդրեա Աստուածանից կ'տայ.—ձախը զաւակ ծնի և սիրտ հանգստանայ։

Փորը լաց է և տրտմութիւն, վերջը մեծութիւն է և հարստութիւն։

Ծունկն աջը մեծ է մեծութիւն և պատիւ.—ձախը վատ զրոյց լսի։

Սրունքն աջը հարստութիւն է, մեծերից գովասանք, անը կ'անցնի.—ձախը հարստութիւն է, նեղութիւնից ազատուի

Ցուցամատերն—աջը բարի, խնդութիւն, վայելենալ և սրտմութիւն է.—ձախը բարեք է և ուրախութիւն, բամբասանք և հետը թշնամանան։

Կոճը—աջը սիրելի մարդ կ՚մեռնի և տրտմի.—ձախը վրան կ՚խօսեն, բարի և ուրախութիւն է.—կոճի ներսը, բարի է և ուրախութիւն։

Ներբանը—աջը ճանապարհորդի, վաճառենալ, յետոյ բարի, և սրտմութիւնից ազատուի.—ձախը բանն աջողի և ազատուի։

Թաթն—աջ ոտի, ուրախութիւն է և ճանապարհ գնալ.—ձախ ոտինը գանձ, ճարելք է և հարստանալ։ Ողջ թաթն—ոտքի իր ազգականից, ճանապարհ գնալ և իշխանութիւն ստանալ.—ձախ թաթն, ազգականներից հեռանալ, տըճարանալ, ապրի և հարստանալ։

Ոտքի մատները—աջու բոլոր հինգ մա-



տերը՝ ճանապարհ գնալ, բարի լինի, ցնծալ, պարգև ստանալ.—ձախինը գատաստան, նեղութիւն, վերք է և աղքատանալ։

Ճկոյթը ոտի—աջը, մեծութիւն, և հարստութիւն, է կամքը կատարի կամ բան կորցնի.—ձախը տրտմի մեծից, սիրելիների մէջ աղմուկ, գանձ և առողջութիւն գտնի։

Բութը ոտի—աջը ուրախանալ, հեռաւոր գալ, հարստանալ.—ձախը առողջութիւն է, հեռաւոր տեսնի և սաստիկ հիւանդանալ։

Ճկոյթը ձեռքի—աջը, գանձ, հարստութիւն է, և զրպարտութիւն—ձախը վէճ է և աղմուկ. կ՚բամբասեն, և կ՚ուրախանալ։

Ձեռքը ողջ—աջը տրտմի բայց յետոյ սիրտը կ՚հանգստանալ, չարը հեռանալ. —ձախը, գանձի և պատուի հանդիպի։

Թուղը - աջը թշնամիներից պատրաստ կաց. ձախը—բարութիւն է։

Կզակը—աջը կռիւ է, ակարանալ, Աստուծով ազատուի.—ձախը հեռաւորը գալ, ճանապարհ գնալ, առողջանալ և ցնծալ։

Երեսը—աջը առողջութիւն և գանձ է.—ձախը տրտմի, ակարանալ, (զգոյշ պիտի լինել) և շուտով կ'մեռնի։

---

*) Թէև երազահանների և դրանց նման հրատարակութիւններն աւելորդ և աննպատակայարմար են տպագրութեան, բայց գաւառական մեր մի քանի գործակալների անընդհատ պահանջին գոհացում տալու համար, հակառակ մեր ցանկութեան, հրատարակում ենք այս „Լիակատար երազահանը" (աշխարհաբարի վերածած), վերապահելով մեզ նրա արտատպելու իրաւունքը։ .Ծ Աշխ.

# ԲԱՂԴԱԳՈՒՇԱԿ *)




Հետևեալ XII բաժանմունքների կարգերից ամեն մինը, ցանկացողներն ի-րանց մաքուր պահում են և գնդակը գցում են վերը նշանակուած շրջանի մէջտեղը։ Իսկ պատասխանը պէտք է գնդակի տակի թուերի մէջ փնտռել։

Բաղդաւոր կը լինի՞մ արդեօք

1. Այո, կը լինես, բայց ծոյլ ես։
2. Որ չես աշխատում՝ ինչ կը լինես։
3. Եթէ առաւօտները վաղ զարթնես։
4. Գործերդ արի եղիր միայն։
5. Եթէ այդ ուրիշին ես ցանկանաս։
6. Խնայողութիւն չունես։
7. Այնպէս չես վարւում՝ որ լինես։
8. Ինչ կը ցանես, այն էլ կը հնձես։
9. Որդիներանցով՝ ծեր ժամանակը։
10. Ամենքի հետ չես վարւում, կոչն-չանաս, այդպէս մի շարունակիր։
1. Բաղդդ բնաւորութեան մէջն է։
12. Խոնարհութեամբ միայն կարող ես բախտաւոր լինել։

II. Յաջողութիւն կունենա՞մ

1. Միայն ճարպիկ և համառ եղիր։
2. Եթէ քեզ աւելի խոնարհ պահես։
3. Եթէ ազնիւ և չափաւոր լինես,
4. Կանանց միջոցով ամեն բանի կը հասնես։



5. Եթէ թողնես յիմարութիւններդ
6. Բոլորը՝ քեզանից է կախուած։
7. Միայն ամուսնացողը հարուստ պէտք է լինի, թէ կուզ տարիքը 60-ից էլ անցնի։
8. Եթէ եռանդով գործես։
9. Առանց այն էլ ինքդ լաւ կաս։
10. Այնպէս, ինչպէս ինքդ ցանկանում ես։
11. Ցանածդ դուրս կը գայ, ծլածդ կը ծաղկի։
12. Ամեն բանում յաջողութիւն կը գտնես, բայց կանանցից կարգին տանջ-ւելու ես։

III. Իմ իղձածս սիրո՞ւմ է ինձ արդեօք

1. Նայիր հայելուն, տես արդեօք կարելի՞ է քեզ սիրել։
2. Սիրում է, բայց ծածկում է,
3. Չի էլ մտածում այդ մասին։
4. Բայց քեզ հետ և ուրիշներին էլ է սիրում։
5. Նայելով թէ ինչ ես ընծայելու
6. Չե՞ս ամաչում, ինչ քո սիրելու ժամանակն է։
7. Սիրում է և կսիրի միայն թէ մինչև

...ը ճշմարտութեան վերջին կոպէկը։

8. Քեզ շատ սիրելուց տանջւում է։

9. Միայն քանի որ տեսնում է քեզ։

10. Շատ քիչ։

11. Սիրում է քեզ միայն երբ լեցն է գրպանդ։

12. Ոչ սիրում է, ոչ ատում, այլ մի-մէ անցած միայն զուր ես գալիս։

## IV. Շուտ կը լինի արդեօ՞ք իմ ամուսնութիւնը

1. Սրբէք, եթէ վերջդ չմտածես։
2. Երբ քո քէֆն է, միայն զգուշացիր։
3. Ո՞ւմն ես պէտք, կամ ո՞ւմն ինչ։
4. Մինչև քեզ չապահովես։
5. Երբ բարեկամ գտնես։
6. Երբ խելօքանաս։
7. Շատ ուշ ես մտածում։
8. Որ միտք չունես՝ լաւ է մի վանք մտնես։
9. Շուտ, հէնց այս տարի, բայց չես աշխատում։
10. Ունեցած առաւելութիւններդ գործ դիր։
11. Դու լաւ գիտես թէ երբ։
12. Դատարկ գրպանով ի՛նչ ամուսնանաք։



## V. Եկող տարի ինչպէ՞ս կը լինի

1. Նայելով թէ դու ինչ կը լինես։
2. Լաւ, եթէ խելքդ գլխիդ պահես։
3. Եթէ առաջուց առած ունենաս վիճակահանութեան տոմսակ, կը տանես։
4. Ամառը շոգ՝ ձմեռը ցուրտ։
5. Հարուստների համար լաւ կը լինի։
6. Խելքիդ գործ կը տաս, փող շատ կը ծախսես։
7. Այդ վատ բնաւորութիւնդ չես փոխել։
8. Բանդ որ պինդ չբռնես՝ շատ վատ կը լինի։
9. Ուրախ և բաղդաւոր։
10. Փողեր շատ կստանաս, շատ էլ կը ծախսես, տակը բան չի մնալ։
11. Յիմարը կաշխատի, խելօքը կուտի։
12. Ծնուածին կը մեռնեն, մեռնողին կը թաղեն։

---

## VI. Երկար կապրեմ արդեօ՞ք

1. Ամէն բանի մէջ չափաւոր լինելով՝ հարիւրից կանցնես։

2. Ոչ մի կողմից քեզ չես զուցում, ինչ երկար կապրես:
3. Այնքան անգամ մէկ ու կէս, որքան ծնողքդ.
4. Եթէ պարտքեր չանես, իննսուն և ինն.
5. Անչափ աչքածակութիւնդ կեանքդ կարճացնում է.
6. Ապրես՝ չապրես. ինչ օգուտ, երբ ոչ քեզ համար ես և ոչ ուրիշի.
7. Ինն անգամ ինը տարի, բայց ցրտից զգուշացիր.
8. Գլուխդ հով. փորդ թոյլ և ոտքերդ տաք պահելով երկար կապրես.
9. Նախանձոտ սրտով երկար չես ապրելու.
10. Փառասիրութիւնդ է կեանքդ կարճացնում:
11. Գործդ իմացիր, քեզ դեռ այդ է հարկաւոր.
12. Ջրից զգուշացիր միայն. *)

---

*) Այս բաղդագուշակը զետեղում ենք որպէս պարապ ժամանակի խաղ՝ մեր ընթերցողների համար. Յան. Աչէ.

# ԴԻՄԱԳՐՈՒՑԱԿ

Յայտնի փիլիսոփաների տեսակէտով.

## ՃԱԿԱՏԸ.

Ճակատի լայնութիւնը—նշան է այնպիսի խելքի, որ կարող է ընդգրկել շատ առարկաներ.

Կարճ ու սեղմուած ճակատը—հաստատ բնաւորութեան նշան է.

Կարճ ճակատը ըստ Բիւֆոնի մարդուս յամառ, աղահ և մաքրասէր ու շատակեր լինելն է ցոյց տալիս:

Լայն ու մեծ ճակատը ընդհանրապէս արտաքին ազդեցութիւններէ դանդաղ տպաւորուելն ու անհակա-ցողութիւնն է արտայայտում.

Տափակ ճակատը առհասարակ ինքնահաւան լինելն է ցոյց տալիս.

Ճակատի վերին կողմն ուղղուած՝ երբեմն էլ հետքերի նման գծեր թողնող կնճիռները՝ խելացիութեան նշան.

Ուռած, քնքուշ մորթ ունեցող ճակատը՝ ցոյց է տալիս տիրոջ քաղաքավարի, հաճոյական ու զուարճասէր բնաւորութեան տէր լինելը.

Դարուփոս, անհարթ ու մորթով ծածկուած ճակատը սաստախօս, խորամանկ, ու դաւաճանող լինելն է ցոյց տալիս։

ՅՕՆՔԵՐԸ

Հորիզոնական դրութեամբ ուղիղ գըծով տարածուող յօնքերը այրական բնաւորութիւնն են արտայայտում։

Անկանոն դրութեամբ ու անկանոն գծերով յօնքերը՝ բնաւորութեան կոշտութիւնն են ցոյց տալիս։

Թանձր յօնքերն ու ուղիղ յօնամազերը — Ողջախոհութիւն, ճշմարտախօսութիւն ու խոհեմութիւն։

Աչքերին շատ մօտ դասաւորուած յօնքերը — Հաստատուն ու զննող բնաւորութիւն։

Շէկ յօնքերը — Թուլութիւն։ Նօսրը — Թեթեւամտութիւն, երբեմն և — խորամանկութիւն։ Թուխը — Եռանդ։

ԱՉՔԵՐԸ

Ով գոհ է իւր վիճակից, ո՛ւմ խիղճը մաքուր է, նրա հայեացքը միշտ հանդարտ է, մինչև անգամ համեստ, և հա-



ու անզօրութիւնն է արտայայտում։

Կապոյտ աչքերը — Թուլութիւն։

Շագանակագոյնը — Հաստատ բնաւորութիւն։

Սեւը — Կորովամտութիւն։

Մոխրագոյնը — Խորամանկ ու յողդողդ բնաւորութիւն։

Բացկապոյտը — Դանդաղ լինելն։

Խոշորը — Ծոյլ ու շատակեր։

Վառվռունը — Այրական, աներկիւղ ու հնարագէտ բնաւորութեան և հայհոյիչ լինելու։

Շուտ շուտ աչքերը թարթողը կամ աչքացաւ ունի, կամ երկչոտ է։

Այն մարդը, որի աչքերը յաճախ դէպի գետինն են ընկնուած՝ մտածող ու աշխատասէր է։

ԲԵՐԱՆՆ ու ՇՐԹՈՒՆՔԸ

Սեղմ բերանը ցոյց է տալիս կարգապահութիւն, մաքրասիրութիւն, գործունէութիւն, ու ճշդութիւն։

Բաց բերանը — Մելամաղձոտութիւն։

Փակ բերանը — Համբերատարութիւն։

Լայն բերանը յիմարութեան նշան

ջ, եթէ վերը ի բարձրացած դէպի ռունգները, և ազատութեան՝ եթէ սեղմած է։

Փոքրիկ նուրբ քիթը, համապատասխան փոքրիկ ճակատին, [illegible] քթին —թոյլ ու երկչոտ բնաւորութեան։

Հաստ շրթունքները հեշտասիրութեան ու որովայնամոլութեան։

Վարին շրթան վերայ եղած փոսիկը ուրախ բնաւորութեան նշան է։

Այն մարդը, որի խօսելու ժամանակ շրթունքների մի ծայրը վերև ու մի կողմն է բարձրանում, արհամարհող ու անզգայ բնաւորութեան տէր է։

## ՔԻԹՆ ու ՌՈՒՆԳՆԵՐԸ

Արծուի ձեւ կորացած քիթը—Հրամայող ու խստաբարոյ լինելու նշան։

Ճակատի հետ ուղիղ գծով միացող քիթը—Հեզ բնաւորութիւն։

Շրթունքի վերայ կորացած քիթը—Սառը, անզգայ ու նենգաւոր լինելը։

Վերև բարձրացած քիթը՝ բաւական ճակատի տակ—Կոպիտ ու բարկացկոտ

Հարթ և ուղիղ քիթը՝ առանց նկատելի գծերի, ոչինչ առանձին բն-



ունակութիւն չէ ցոյց տալիս։

Փոքրիկ ռունգները—Թուլութիւն ու երկչոտութիւն։

Կանոնաւոր զարգացած ռունգները—[illegible]ամարութիւն, և քնքշութիւն։

Այս ու այն կողմն ուղղուած ռունգները—Բարկացկոտի ու կրքոտի նշան։

## ԿԶԱԿՆ ու ԱՏԱՄՆԵՐԸ

Սուր կզակը—Խորամանկութիւն ու չարամտութիւն։

Տափակ կզակը—Մտածողութիւն։

Գէր կրկնակի կզակը—Ճաշասէրութիւն ու զգայունութիւն։

Փոքրիկ, կարճ կզակը—Թուլութիւն ու երկչոտութիւն։

Կլոր, փոսաւոր կզակը—Բարի բնաւորութիւն։

Երկու կէս եղածի պէս կզակը—Զգոյշ և խոհեմ լինելը։

Ձոր ու կուծ եկած ատամները—Մաղձոտութիւն։

Գէր ու մաստ ատամները—Մաղաս[illegible]ծին բնաւորութիւն ու կոպիտ միտումներ։

## ԱԿԱՆՋՆԵՐԸ

Մեծ ականջները — Անքաղաքավարութիւն ու ժլատութիւն։

Փոքր ականջները — Խորամանկութիւն ու խելք։

Հաստ ականջները — Պարզութիւն։

Բարակ, թափանցիկ ականջները — Պատուախնդրութիւն։

## ՄԱԶԵՐԸ

Սև ու [illegible] մազերը, որոնք չեն ոլորւում քիչ խելք՝ բայց աշխատասիրութեան ու կարգապահութեան նշան։

Երկայն, հարթ մազերը — Քաղցր բնաւորութիւն։

Խարտեաշ մազերը — Քնքշութիւն։

Սևուները, որոնք և փայլուն մազերը չարութեան նշան են, մանաւանդ երբ նրանց գոյնը յունքերի գոյնից տարբերւում է։

ՊԵՏ. ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

## Զ) ՏՕՆՔ ԿԱՅՍԵՐԱԿԱՆՔ

Ապրիլի 23.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսրուհւոյ Աղեքսանդրայ Թէոդորովնայի։

Մայիսի 6.—Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Աղեքսանդրովչի։

Մայիսի 14.—Թագադրութիւն Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Աղեքսանդրովչի և Աղեքսանդրայ Թէոդորովնայի։

« 25 Ծն. Ն. Կ. Մ. Թագուհի-Կայսրուհւոյ Աղեքսանդրայ Թէոդորովնայի։

Յուլ. 22.—Անուանակ. Ն. Կ. Մ. Մայր Թ. Կայսրուհւոյ Մարիայ Թէոդորովնայի։

Յուլ. 30.—Ծնունդ Ն. Կ. Ծ. Թագաժառանգ Կայսր Աղեքսէի Նիկոլաեվիչի։

Օգոստ. 25.—Յիշատակ Նուաճման արևելեան Կովկասու։

Հոկտ. 21.—Գահակալութիւն Ն. Կ. Մ.—Կայսր Նիկոլայ Աղեքսանդրովչի։

Նոյեմբերի 14.—Ծ. Ն. Կ. Մ. Մայր Թ. Կայսրուհւոյ Մարիայ Թէոդորովնայի։

Հոկտ. 5.—Անուանակ. Ն. Կ. Մ. Թագաժառանգ Կայսր Աղեքսէի Նիկոլաեվիչի։

Դեկտ. 6.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Աղեքսանդրովչի։

«Ծոցի», «Պատի» և «Սեղանի» օրա-
ցույցները (երեքը միասին) ճանապ-
հածախքով արժեն մէկ ռուբլի․

„Армянскій Календарь“ съ прел...
ніями ц. 20 к.

Վաճառւում են Թիֆլիսի յու...
գրավաճառանոցներում և բոլոր ...
Թեղէններէ խանութներում։ Մեծ ...
նակութեամբ գնողներն աւելի զեղ...
առանդու համար պէտք է դիմեն ...

Օրացոյցների մէջ տպագրւում են ...
տարբերութիւններ զանազան լեզու...
բով և անհատական գնով։ Ցանկա-
ները դիմում են հետևեալ հասցէո...
Թիֆլիս Մակար Չմշկեանին։ Тифл...
Макару Чимишкянцу.

059
Գ-70

6729

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0032323